ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԿԱՔԱՎԱՁՈՐԻ

<<Մ. ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2028

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐ

ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ՝

ԷՄԻՆ ՌԱՉՄԻԿԻ ՄԻՆԱՍՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆ—ԹԱԼԻՆ

Բովանդակություն

1. Ընդհանուր տեղեկություններ դպրոցի մասին…….....3

2.Դպրոցի գործունեությունը.....6

3. Դպրոցի շենքային պայմանները, առկա վիճակը.....11

4.Դպրոցի նյութատեխնիկական բազայի վերլուծություն.....19

5.Դպրոցի կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծությունը.....31

6. Դպրոցի համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների
հետ…….....……....39

7. Դպրոցի մանկավարժական համակազմի մասնագիտական որակների
ներկայացումը.....49

8. Օգտագործվող ՏՀՏ և այլ կրթական տեխնոլոգիաների և նորարարությունների
ներկայացումը…….....5
7

9.Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի
վերլուծությունը.....65

10.Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի
վերլուծություն.....78

11.Աշխատակազմի արժեվորման, խրախուսման և ինքնակրթության
հնարավորությունների վերլուծությունը.....86

12.ՈՒսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը՝ դրանց
արդյունավետության, ցուցանիշների շեղումների և պլանավորման խնդիրների
տեսանկյունից.....91

13.Խորհրդակցական մարմիններ.....97

14. Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցները և
նյութատեխնիկական պարագաները.....110

15. Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները....113

Եզրափակում.....117

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս կառավարության /այսուհետ՝ հիմնադիր/: <<ՀՀ Արագածոտն մարզի գ. Կաքավաձորի Մ. Մխիթարյանի անվան միջնակարգ դպրոց>> Պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ դպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:

Դպրոցը հիմնադրվել է 1970թ.-ին, կոչվել է Կաքավաձորի միջնակարգ դպրոց, 2004թ.-ին դպրոցը անվանակոչվել է Արցախյան պատերազմում զոհված Մեսրոպ Մխիթարյանի անունով, հաստատության անվանումը՝ **<<ՀՀ Արագածոտն մարզի գյուղ Կաքավաձորի Մ. Մխիթարյանի անվան միջնակարգ դպրոց>>** ՊՈԱԿ:

Դպրոցն ունի ՀՀ զինանշանի պատկերով հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր: Ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ: Պետ ռեգիստրի գրանցման վկայական N:03Ա059084 , գրանցման համար 94.210.00370

Դպրոցն իրականացնում է հանրակրթական ծրագրեր՝ ըստ հաստատված լիցենզիաների.

1-ին աստիճանի՝ տարրական կրթական ծրագիր՝ առկա ուսուցմամբ N: 1117

2-րդ աստիճանի՝ հիմնական կրթական ծրագիր՝ առկա ուսուցմամբ N: 1028

3-րդ աստիճանի՝ միջնակարգ կրթական ծրագիր՝ առկա ուսուցմամբ N: 0840

ՀՀ Արագածոտն մարզի գ. Կաքավաձորի Մեսրոպ Մխիթարյանի անվան միջնակարգ դպրոցն ունի նախակրթարան, որը հիմնադրվել է 2013թ.-ին: Նախակրթարանը վերանորոգված է և ապահովված է համապատասխան գույքով և նյութական բազայով: 2023-24 ուստարում նախակրթարան է հաճախում 11 սան: Նախակրթարանն ունի լիցենզիա, սաների սահմանային թիվը 17 է ավագ տարիքի խմբերի համար:

Դպրոցում աշխատում է 28 մանկավարժ, որից երկուսը՝ վարչական, մեկ՝ զինղեկ, մեկ՝ ԴԱԿ, մեկ՝ սոցմանկավարժ, մեկ՝ հոգեբան, մեկ՝ դաստիարակ, 21՝ ուսուցիչ: Մանկավարժներից 25-ը ունեն բարձրագույն կրթություն, 3-ը՝ միջին մասնագիտական: Մանկավարժական խորհուրդը բաղկացած է 28 անդամից, ուսումնաօժանդակ անձնակազմը՝ 7 աշխատակից: Դպրոցի աշակերտների թիվը 2023-24 ուսումնական տարում՝ 137 է: Լիցենզիայով սահմանված սովորողների թիվը 291 է:

Դպրոցն ունի միացյալ կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ, աշակերտական խորհուրդ, ծնողական խորհուրդ: Դպրոցը միահերթ է և 5-օրյա աշխատանքային ռեժիմով: Դպրոցն ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում է դպրոցի նախահաշիվը, ֆինանսական հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերի հայտարարությունները և այլ տեղեկություններ:

Դպրոցի գործունեության առարկան յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումն է հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրեր իրականացնելու միջոցով: Ապահովել այնպիսի ուսումնառության համակարգ, որը համապատասխանում է պետական պահանջներին և սովորողներին ապահովում է անհրաժեշտ գիտելիքներով, հմտություններով, արժեքային համակարգով ու որակներով:

Հաստատության հասցե՝ <<ՀՀ Արագածոտնի մարզ գ. Կաքավաձոր 1-ին փողոց, 45/2>>

Էլեկտրոնային հասցե՝ kaqavadzor@schools.am

Ինտերնետային կայքի հասցե՝ kaqavadzor.schoolsaite.am

Տնօրեն՝ Էմին Մինասյան /հեռ: 093588676/

Դպրոցի զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթ է:

Դպրոցի զարգացման ծրագիրը /այսուհետ ԴԶԾ / կարևոր նշանակություն պետք է ունենա դպրոցի տնօրենի հավակնորդի ընտրության հարցում, քանզի այն արտացոլում է յուրաքանչյուր հավակնորդի՝ տվյալ դպրոցի առնվազն 5 տարվա տեսլականը:

Դպրոցի զարգացման ծրագրի հիման վրա պլանավորվում է աշխատանքը դպրոցում:

ԴԶԾ-ն էապես տարբերվում է դպրոցի ավանդական աշխատանքային պլանից: Եթե դպրոցի աշխատանքային պլանում հիմնականում ուշադրություն է դարձվում դպրոցի ընթացիկ խնդիրների լուծմանը, ապա զարգացման ծրագիրը հանդես է գալիս որպես դպրոցի ռազմավարական պլանավորում, որն ավելի շատ նպատակաուղղված է դեպի ապագան և պետք է ունենա նորարարական ուղղվածություն:

Սույն զարգացման ծրագիրը կազմվել է ըստ՝

. ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 22.09.2022թ. <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները>> N:35-Ն հրամանի:

. ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 18.04.2023թ.-ի N:399-Ա հրամանի պահանջների

. <<Հայաստանի Հանրապետության կրթության՝ մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի>> նախագծի:

. ՀՀ <<Հանրակրթության մասին>> օրենքի

. ՀՀ <<Կրթության մասին>> օրենքի

. ՀՀ Սահմանադրության

. ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության:

. Հանրակրթական ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկի:
. Օրենքով սահմանված կարգով նորմատիվ իրավական ակտերի:
. Դպրոցի վերջին 5 տարիների ներքին գնահատման ցուցանիշների:
. Դպրոցի մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդների հետ հանդիպումների ժամանակ ներկայացված առաջարկությունների:

Դպրոցի զարգացման ծրագիրը նախասահմանում է 2023-2028 թթ դպրոցի զարգացման հիմնական ուղղությունները՝ արդի պետական, կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան, հաշվի է առնված դպրոցի ինքնազարգացման ներուժը և Կաքավաձոր բնակավայրի առանձնահատկությունները:

2. Դպրոցի գործունեությունը

Ժամանակակից աշխարհում գրեթե բոլոր ոլորտներում փոփոխություններն աննախադեպ արագ և դինամիկ են ընթանում: Շարունակաբար նորացվող, զարգացվող և փոփոխվող գիտելիքը և դրա ստեղծման համար անհրաժեշտ նորարարությունն ու ստեղծագործությունը դառնում են մրցունակության և արդյունավետության բարձրացման կարևորագույն գործոններ՝ թե ահատական, թե ներպետական և թե համաշխարհային մակարդակներում:

Գիտելիքն այսօր այլևս լոկալ բնույթ չի կրում, ցանցերի և հեռահաղորդակցման դարաշրջանում աշխարհի որևէ ծայրում ստեղծված գիտելիքն արագորեն տեղայնացվում է աշխարհի մեկ այլ անկյունում: Արդիական են դառնում ՏՀՏ-ների միջոցով միմյանց և աշխարհի հետ ցանցավորված անհատների և թիմերի աշխատանքը, որոնք ստեղծագործաբար են մոտենում կյանքի առաջադրած խնդիրներին և պատրաստ են շարունակաբար սովորելու:

Հզոր պետության, ամուր ընտանիքի, առողջ հասարակության և բանիմաց, ազգանվեր, համամարդկային արժեքներով օժտված անհատի ձևավորման հիմքը դպրոցն է: Կրթված և ճիշտ դաստիարակված սերունդը լավագույն զենքն է պետության անվտանգության լավագույն երաշխիքը ցանկացած պայքարում:

Այս ամենին հասնելու հիմնական ճանապարհը դպրոցական կրթությունն է, որի ձևերն ու բովանդակությունը փոփոխվում են արձագանքելով գիտելիքի փոխանցման և տարածման արագընթաց տեմպերին և պահանջներին:

Հետևաբար դպրոցը բավարարում է հետևյալ կրթական կարիքները՝

- Յուրաքանչյուր սովորողի ապահովել որակյալ կրթությամբ և հիմնարար գիտելիքներով:
- Կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման նոր ձևաչափերի իրականացման անհրաժեշտ պայմանների ձևավորում:
- Հաղորդակցվելու և ինքնուրույն գործունեություն ծավալելու կարողությունների զարգացում:

- Սովորողներին տրամադրել բազմակողմանի կրթություն, որը հնարավորություն կընձեռնի նրանց մասնագիտական կողմնորոշման հարցում և ուսումը շարունակելու երկրում և երկրից դուրս:
- Ձևավորել և դաստիարակել անհատ, ով կարժևորի հայրենասիրության, ազգային մտածողության և գաղափարախոսության որակներ:
- Ամրապնդել սովորողի սերը և հարգանքը իր նախնիների ժառանգության և մշակույթի նկատմամբ:
- Ստեղծել հասանելի պայմաններ բոլոր սովսրողների համար՝ անկախ ազգությունից, սոցիալական վիճակից և մտավոր կարողություններից:
- Առանձնահատուկ ուշադրություն դարձնել օժտված, ընդունակ կամ որևէ բնագավառում աչքի ընկած սովորողին, տալ խրախուսում, գնահատել նրա նախասիրությունները, ընդգրկել խմբակներում, որպեսզի խթան հանդիսանա մյուս սովորողների համար:

Դպրոցի առաքելության նպատակն է ստեղծել միջավայր, որն ազատ է հոգեբանական բռնության դրսևորումներից և այդ առողջ բարոյահոգեբանական մթնոլորտում ճիշտ ուսումնառության արդյունավետ կազմակերպման միջոցով կրթել և ձևավորել բանիմաց , բազմակողմանիորեն զարգացած, մասնագիտորեն կողմնորոշված, հայրենասեր, ազգային և համամարդկային արժեքներով օժտված կարողունակ քաղաքացի, ձևավորված անհատականություն, ով կգիտակցի իր դերը շրջապատի, հայրենիքի հանդեպ:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներ:

Մարդկային ռեսուրսներ՝

1. Առողջ սովորողներ,

2. Մանկավարժական համակազմ, առկա մասնագետների շարունակական վերապատրաստմամբ և համակազմի համալրմամբ նոր փորձառու կադրերով,

3.Աշխատանքի կառավարումը և ղեկավարումը իրականացնող վարչական անձնակազմ,

4. Ուսումնաօժանդակ անձնակազմ,

5. Համայնքի կրթական կառավարման մարմինների շահառուների հետ համագործակցություն,

6. Հոգատար ծնողներ:

Նյութական ռեսուրսներ՝

1. Տեղեկատվական տեխնոլոգիաներ,

2. Լաբորատոր սարքավորումներ, նյութեր այդ թվում էլեկտրոնային,

3. ՀՊՉ-ներ, առարկայական ծրագրեր, դասագրքեր:

Ֆինանսական ռեսուրսներ՝

1.Պետական բյուջե,

2. Դրամաշնորհներ,

3.բարեգործական ներդրումներ:

Դպրոցն ապահովում է՝

- առողջ ուսումնական միջավայր,
- առողջ սննդի հնարավորություն,
- խաղի, ֆիզիկական ակտիվության հնարավորություն, լուսավոր մեծ դասասենյակներ, ներառական կրթություն և հավասարություն,
- հանդուրժողականություն և ակտիվ մասնակցություն
- մարզադահլիճ, մարզահրապարակ
- հանդիսությունների դահլիճ
- կահավորված շախմատի սենյակ:

Յուրաքանչյուր սովորողին դպրոցը ապահովում է հնարավորություն հանրակրթական պետական չափորոշչային ծրագրերին համապատասխան ուսուցմամբ արդյունավետ ձևերի և մեթոդների ընտրություն:

Դպրոցն իրականացնում է նախակրթարանի սաների և 1-4-րդ դասարանների սովորողների սննդի կազմակերպում:

Իրականացնում է ուսուցողական ծրագրեր, որոնք ուղղված են սովորողների անվտանգ կենսագործունեության, առողջ ապրելակերպի

կարողությունների և ֆիզիկական ու հոգևոր հմտությունների ձևավորմանը:

Սովորողների կրթական կարիքների լիարժեք ապահովմանը խոչընդոտ է հանդիսանում անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունը՝

Ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության լաբորատորիաներ, արհեստանոցներ, լրացուցիչ դասասենյակներ ՝ կիսվող դասաժամերի համար, բուֆետ, բուժկետ, լոկալ ջեռուցում:

Դպրոցն ունի նաև մարդկային ռեսուրսների կարիք՝ այգեպան, բուժքույր:

Դպրոցի առջև դրված առաքելությունն իրականացնելու գրավականներն են՝

- Իրենց գործին գիտակ մանկավարժական թիմ, պատրաստ միմյանց աջակցելու, ինքնակրթվելու և կրթելու:
- Մանկավարժական համակազմի բարելավմանն ուղղված միջոցառումներ՝ վերապատրաստումներ և այդ ամենի կիրառումը գործնական աշխատանքում:
- Կրթության կազմակերպման առողջ և շարունակական միջավայրի բարելավում:
- Դպրոցի ակտիվ ներգրավվածությունը և սովորողների մասնակցությունը սոցիալ- մշակութային միջոցառումների, օլիմպիադաների, մրցույթների, արտադասարանական միջոցառումների:
- Նախագծային ուսուցման կիրառում և խմբակների ստեղծում:
- Ակտիվ համագործակցություն համայնքի հետ՝ հաշվի առնելով համայնքի առանձնահատկությունները:
- Ապահովել հավասար կրթություն բոլոր շահառու խմբերի կարիքներին և հնարավորություններին համապատասխան (ծնողազուրկ, սոցիալապես անապահով, այլազգի, ԿԱՊԿՈՒ երեխաներ, հաշմանդամ երեխաներ):

- Ստեղծել անվտանգ և բարեկեցիկ պայմաններ սովորողների ֆիզիկական և հոգևոր դաստիարակությունը ճիշտ կազմակերպելու համար:

3. ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ

- Շենքը տուֆակերտ երկհարկանի քարե կառույց է , կառուցվել և շահագործման է հանձնվել 1970 թվականին:
- Նախագծային հզորությունը 320 աշակերտի համար:
- Դպրոցի շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության նորմատիվներին:
- Շենքի մակերեսը 2020մ^2 է: Դպրոցամերձ հողամասի մակերեսը 1.34 հա.:
- Դպրոցի տարածքը ցանկապատված է և անվտանգ սովորողների ազատ տեղաշարժման համար: Մուտքի հատվածում կա հետիոտնային անցում:
- Դպրոցն ընդհանուր ունի 3 մուտք, 1-ը ճակատային մասից՝ 2 լայն դռներով, 2 մուտքը շենքի ետնամասից (պահուստային):
- Տնօրինության, մանկավարժական և ուսումնաօժանդակ անձնակազմի, աշակերտների մշտական ջանքերով մաքուր և կոկիկ է դպրոցի տարածքը:
- Դպրոցի միջանցքներում և դպրոցի բակում տեղադրված են աղբամաններ, որտեղ հավաքվում է աղբը և կանոնավոր դուրս է բերվում դպրոցի տարածքից:
- Դպրոցի շենքը հարմարեցված չէ ԿԱՊԿՈՒ սովորողների անվտանգ տեղաշարժ և ուսուցում ապահովող պայմաններին:
- Շենքի տանիքը վերանորոգված է (թիթեղյա), 2022թ-ի օգոստոսին դպրոցի և մնացած օժանդակ մասնաշենքերի կտուրների վրա տեղադրվել են ձնարգելանքներ:
- Եվրոպատուհանները վերանորոգվում և թարմացվում են անհրաժեշտության դեպքում:
- Դպրոցի մուտքի , առաջին, երկրորդ հարկի բոլոր սենյակների դռները փոխված են:
- Դպրոցի առաջին հարկի պատուհանները չունեն մետաղյա ճաղավանդակներ:
- Դպրոցի կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է:
- Դպրոցում մշակված և առկա է սովորողների և անձնակազմի տարհանման պլան, այն փակցված է նախասրահում, բոլոր հարկերում՝ գունային ցուցասլաքներով:

- Տարհանման ուղիները ազատ են օգտագործման անհրաժեշտության դեպքում:
- Դպրոցն ունի ազդարարման շչակ, հակահրդեհային կրակմարիչներ
- Դպրոցը չունի ապաստարան:
- Տարեկան 2-3 անգամ իրականացվում են տարհանումներ
- Բակում առկա է մարզահրապարակ:
- Դպրոցի տարածքում կա պտղատու այգի, գեղեցիկ և խնամված ծաղկանոց:
- Բակում 2014թ. տեղադրվել է Մեսրոպ Մխիթարյանի արձանը, ում անունով էլ կոչվում է դպրոցը:
- 2020 թվականին դպրոց մտնող հոսանքը (առանձին կետով 40կվ. հզորությամբ , փակ մալուխով) ստորգետնյա անցումով հասցվել է դպրոց:
- 2020 թվականին համայնքի աջակցությամբ անցկացվել է դպրոցի համար նոր ջրամատակարարման համակարգ:
- Չկա լոկալ ջեռուցում, շենքը ջեռուցվում է էլեկտրական վառարաններով:
- Դպրոցի դասասենյակներում նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը համապատասխանում են առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանված նորմերին:
- Դպրոցի սովորողների թիվը համապատասխանում է ՀՀ. կառավարության հաստատած տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվներին և հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին:
- Դպրոցում կա 3 սանհանգույց, որից միայն մեկն է վերանորոգված և ենթակա շահագործման, մյուս երկուսը ունեն վերանորոգման կարիք և չեն գործում:
- Դպրոցն ունի 13 դասասենյակ:
- Դպրոցն ունի մեկ ուսուցչանոց: 1.ՆԶՊ-ի կաբինետ,1. զենքի պահպանման սենյակ, 1. լաբորատորիա, 1. ինֆորմատիկայի կաբինետ, 1.շախմատի սենյակ, 2. վարչական սենյակ, 1. աշակերտական խորհրդի սենյակ, 1. գրադարան, 1.սպորտդահլիճ, 1. հանդիսությունների դահլիճ, 2. հանդերձարան, 1.ճաշարան,1բուֆետ 1. նախակրթարանի սենյակ,1 պահակների և մաքրուհիների սենյակ, 1. ախտահանիչ լուծույթների պատրաստման օժանդակ սենյակ:

Իրավիճակի վերլուծություն

Դպրոցի զարգացման ծրագրի առանցքային ուղղություններից է դպրոցի բոլոր ոլորտների, իրավիճակների վերլուծությունը, որի շնորհիվ հնարավոր է լինում հստակ պատկերացնել դպրոցի և շենքային նյութատեխնիկական բազայի և նրանում իրականացվող կրթական ծրագրերի առկա վիճակը, որն էլ հնարավորություն է տալիս սահմանել նպատակներ, հասկանալ նպատակներից բխող խնդիրները, դրանց լուծման համար անհրաժեշտ արդյունավետ գործողությունները՝ իհարկե չբացառելով իրատեսական ռիսկերը: Ռիսկերի մեղմացման համար պետք է կազմակերպել համապատասխան գործողություններ, որոնք էլ կհանգեցնեն ակնկալվող արդյունքների: Վերջիններս անհրաժեշտ է վերլուծության արդյունքում գնահատել՝ ըստ համապատասխան չափանիշների, վեր բարձրացնել բացթողումները, թերությունները, մշակել մեխանիզմներ բարելավելու համար:

Դպրոցը մասամբ վերանորոգված է: Դասասենյակների մեծ մասը վերանորոգված են և ապահովված են անհրաժեշտ գույքով:

Առաջին հարկի միջանցքը վերանորոգված է, երկրորդ հարկի և սպորտ-դահլիճ ու հանդիսությունների դահլիճ տանող միջանցքը ունեն վերանորոգման կարիք: Որոշ դասասենյակներ ունեն վերանորոգման կարիք: Մասնակի վերանորոգման կարիք ունի սպորտդահլիճը և հանդիսությունների դահլիճը: Ամբողջովին վերանորոգման կարիք ունեն բուֆետը, հանդերձարանները և դրանց կից սանհանգույցը:

ՆԶՊ-ի, ինֆորմատիկայի, շախմատի կաբինետները վերանորոգված են և ապահովված են անհրաժեշտ գույքով: Վերանորոգման կարիք ունի լաբորոտորիան և ունի դիդակտիկ նյութերի ու սարքավորումների պակաս : Նախակրթարանը վերանորոգված է և ունի համապատասխան գույք:

2018թ.-ին ՄԱԿ-ի գրասենյակի կողմից ամբողջությամբ վերանորոգվել է ճաշարանը և ապահովվել է էլեկտրական սարքավորումներով, իսկ մնացած գույքը ձեռք է բերվել դպրոցի խնայողությունների հաշվին: Գրադարանն ունի ամբողջությամբ վերանորոգման և անհրաժեշտ գույքի կարիք: Դպրոցի ջեռուցումն էլէկտրական է, ջեռուցվում է մասնակի: Չեն ջեռուցվում առաջին և երկրորդ հարկերի միջանցքները, սպորտդահլիճը, հանդիսությունների դահլիճը, գրադարանը, հանդերձարանները:

Դպրոցի ենթակառուցվածքներն իրենցից ենթադրում են առարկայական լաբորատորիաները, կաբինետները, դասասենյակները, գրադարանը, բուժկետը, հանդիսությունների դահլիճը, սպորտդահլիճը, ճաշարանը, բուֆետը, անհրաժեշտ այլ կաբինետներ՝ սովորողների կարիքները, նախասիրությունները ապահովելու համար: Կրթական նոր չափանիշներին հաջող անցման հիմնական պայմաններից է դպրոցի ենթակառուցվածքի նյութատեխնիկական բաղադրիչի ավելացում, բարելավում: Դպրոցի ենթակառուցվածքների ոչ բավարար պայմանների պատճառով առաջանում են որակյալ կրթության կազմակերպման համար որոշակի դժվարություններ.

- Դասասենյակների ոչ բավարար քանակը խոչնդոտում է կիսվող դասաժամերի իրականացմանը
- ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատելու համար չկա անհրաժեշտ տարածք՝ ռեսուրս, սենյակ (բազմամասնագիտական խմբի աշխատանքների իրականացման համար):
- Դպրոցը չունի քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության կաբինետներ:
- Դպրոցը չունի արհեստանոցներ, երգ-երաժշտության կաբինետ:
- Դպրոցը չունի ապաստարան:
- Դպրոցը չունի բուժկետ:

ուժեղ կողմեր	***թույլ կողմեր***
• Հանդիսությունների դահլիճ • Սպորտդահլիճ • Բացօթյա սպորտհրապարակ • Դպրոցամերձ այգի • Ցանկապատված հողատարածք • Համակարգչային դասասենյակ • Շախմատի դասասենյակ • Ճաշարան • Ստորգետնյա առանձին հոսանքի գիծ • Վերանորոգված տանիք և ձնարգելանքներ • Փոխված դռներ և պատուհաններ • Ազդարարման համակարգ	• Ապաստարանի բացակայություն • Չվերանորոգված միջանցքներ • Չվերանորոգված սանհանգույցներ • Լոկալ ջեռուցում • Շենքը հարմարեցված չէ ԿԱՊԿՈՒ սովորողների անվտանգ տեղաշարժի համար • Չվերանորոգված հանդերձարաններ • Չվերանորոգված գրադարան

• Պահուստային ելքեր • Ախտահանիչ լուծույթների պատրաստման օժանդակ սենյակ • ՆԶՊ-ի դասասենյակ • Շենքի պահպանման սենյակ, որն ունի մետաղյա ճաղավանդակներ և ապահովված է լուսային և ձայնային ազդանշանային համակարգով • Ութ կրակմարիչներ, պատվահանակ • Սեյսմակայուն և անվտանգ շենք • Տեխնիկական աշխատողների համար առանձին սենյակ	

Վերլուծություն /համապատասխանություն/

Շենքն ամբողջությամբ սեյսմակայուն է, համապատասխանում է անվտանգության նորմերին: Շենքը մասամբ վերանորոգված է, տանիքը՝ հիմնանորոգված, տեղադրված են ձնարգելանքներ, տանիքի վրա կա տեղադրված ազդարարման համակարգ, փոխված են դռներն ու պատուհանները, ունի պահուստային ելքեր, կրակմարիչներ, պատվահանակ:

Դպրոցը ջեռուցվում է էլեկտրական վառարանների միջոցով, սակայն կարևոր է, որ դպրոցն ունենա լոկալ ջեռուցում: Շենքն իր նախատեսված հզորությամբ և ներկայիս վիճակով համապատասխանում է սովորողների թվին և նրանց համար իրականացվող կրթական ծրագրերին, չնայած կան որոշակի շեղումներ մասնավորապես սանհանգույցների պակաս, ԿԱՊԿՈՒ սովորողների հարմարությունների բացակայություն:

Նպատակ	• Ամբողջական վերանորոգում՝ - 2-րդ հարկի միջանցք, - 2 սանհանգույցներ, - հանդերձարաններ, - գրադարան, - որոշ դասասենյակներ:

	• Մասնակի վերանորոգում՝ - սպորտդահլիճ, - հանդիսությունների դահլիճ, - դեպի դահլիճ տանող միջանցք • լոկալ ջեռուցում • ԿԱՊԿՈՒ սովորողների համար թեքահարթակ և հարմարեցումներ • Արևային կայանի տեղադրում • Բուֆետի վերանորոգում և շահագործում
Խնդիր	- Ոչ բավարար ֆինանսական ռեսուրսներ
Իրականացվող գործողություն	- Իրականացնել վերանորոգման աշխատանքներ - Նպատակային ներդրումների համար նոր - համագործակցությունների ձևավորում
Պատասխանատուներ	- Տնօրեն - Վարչատնտեսական համակարգող
Կատարման ժամկետները	- Սանհանգուցների և դասասենյակների վերանորոգում՝ 2023-2024թթ. - Միջանցքների, գրադարանի, հանդերձարանների վերանորոգում՝ 2023-2025թթ. - Թեքահարթակների և հարմարեցումների կառուցում՝ 2023-2024թթ. - Լոկալ ջեռուցում՝2023-2028թթ. - Արևային կայանի տեղադրում՝2023-2026թթ. - Շենքի ընդհանուր վերանորոգում՝ 2023-2028թթ. - Բուֆետի վերանորոգում և շահագործում՝ 2023-2025թթ.
Ռիսկեր	- Ֆինանսների բացակայություն - Վատ կատարված աշխատանք - Ֆորսմաժորային իրավիճակ

Ռիսկերը մեղմացնող գործողություններ	- Ավելացնել համագործակցությունների թիվը՝ դպրոցում ներդրումներ կատարելու նպատակով - Հետևողական լինել կատարված աշխատանքի որակի բարելավման համար - Իրականացնել համապատասխան գործողություններ՝ստեղծված իրավիճակից ելնելով
Ակնկալվող արդյունքներ	- Ամբողջությամբ վերանորոգված դպրոց - ԿԱՊԿՈՒ սովորողների համար հարմարեցումներ - Լոկալ ջեռուցմամբ տաքացվող դպրոց - Արևային կայանի միջոցով հոսանքի խնայողություն - Բուֆետի վերանորոգում, շահագործում և սպասարկում
Գնահատման չափանիշ	- Կատարված չէ ոչ մի աշխատանք-**անբավարար** - Վերանորոգվել են միջանցքները-**բավարար** - Վերանորոգվել է ամբողջ դպրոցը, տեղադրվել է արևային կայան, բուֆետի շահագործում-**լավ** - Վերանորոգվել է ամբողջ դպրոցը, տեղադրվել է արևային կայան, բուֆետի շահագործում, ապահովվել է լոկալ ջեռուցում, կառուցվել է ԿԱՊԿՈՒ սովորողներին համապատասխան հարմարեցումներ-**գերազանց**
Վերահսկողություն	Լիազորված մարմին, ԿԽ

4.ԴՊՐՈՑԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի գործունեության և զարգացման համար նյութատեխնիկական բազան անհրաժեշտ պայման է: Նյութատեխնիկական բազան հնարավորություն է տալիս կազմակերպել գործնական, լաբորատար աշխատանքներ, լրացուցիչ կրթական ծառայություններ, կրթական և ստեղծագործական գործունեություն, իրականացնել մշակութային միջոցառումներ:

Մեծ նշանակություն ունի նաև նյութատեխնիկական մաս կազմող ժամանակակից համակարգիչները, էլեկտրոնային գրատախտակը և այլ տեխնիկական սարքեր:

Դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման պայմաններից է նյութատեխնիկական բազայի պահպանումն ու զարգացումը:

Ուսումնական գործընթացը ավելի արդյունավետ կազմակերպելու համար պահանջվում է նյութատեխնիկական բազայի անընդհատ համալրում, արդիականացում:

Նյութատեխնիկական բազան ձեռք է բերվում հիմնականում պետական բյուջեի ֆինանսավորման միջոցով, սակայն լինում է նաև բարեգործության արդյունքում նպատակային ներդրումներով:

Դպրոցն ունի

Տարածքը / սենյակը /	Գույքն ու իրերը	Մակերեսը /մ^2 /
Նախակրթարան	պահարաններ, սեղան, աթոռներ, գրատախտակ, ժամացույց, խաղալիքներ, անհրաժեշտ իրեր, պաստառներ	56
Ճաշարան	Փայտե 4 սեղաններ, 20 աթոռներ, փայտե 1 պահարան, 1 սառնարան, 1 ջրատաքացուցիչ, 1 հատ 2 տեղանոց մետաղյա պահարան, 1 գազօջախ, 1 լվացարան, 1 էլեկտրական ջեռոց, անհրաժեշտ սպասքի պարագաներ, կշեռք, կրակմարիչ	35
Ճաշարանի պահեստ	Սեղաններ, որտեղ սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան պահվում են մթերքները	15
Սպորտդահլիճ	1 թենիսի դաշտ, 8 գնդակ, 2 բարձրացատկի հավաքածու, 10 մարմնամարզական օղակներ, 1 վոլեյբոլի ցանց, 2 բասկետբոլի զամբյուղ, 1 մագլցման պարան, 5 մատրաս, 5 ցատկապարան,	155

	4 նիզակ, 4 նռնակ, 2 սկավառակ, կրակմարիչ	
Սպորտ-գույքի համալրման տարածք	Օգտագործման համար անհրաժեշտ սպորտ գույք	20
Հանդիսությունների դահլիճ	Դաշնամուր, բեմ, հանդերձարան, շերտավարագույրներ, 88 աթոռներ	130
Գրադարան	5 մետաղյա պահարաններ, սեղան, աթոռ, գեղարվեստական գրքեր՝ 3300 միավոր, դասագրքեր՝ 1774 միավոր	20
Տնօրենի կաբինետ	2 պահարան, 1 համակարգիչ, 1 տպիչ սարք, 1 չհրկիզվող պահարան, աթոռներ, սեղան, շերտավարագույր, կրակմարիչ	30
,,Արմաթ,, ինժեներական լաբորատորիա , որը գործում է ինֆորմատիկայի կաբինետում	,,Այգեստան,, մինի համակարգիչ, հավաքածու, 5 համակարգիչ, 1 եռաչափ տպիչ, 1 շաղափային և լազերային հաստոց, ռոբոտաշինության համար նախատեսված ուսումնական հավաքածու և 1 ավտոմատացման հավաքածու, համակարգչային սեղաններ, աթոռներ	52

Ուսուցչանոց	3 պահարան, 6 գրասեղան, 20 աթոռներ, 1 բազկաթոռ, 2 խորհրդակցական սեղան,	52
Համակարգողի կաբինետ	1 համակարգիչ 1բազմաֆունկցիոնալ տպիչ 3 պահարան, 1 համակարգչի սեղան, 2 սեղան, 6 աթոռներ, Շերտավարագույր	16
Շախմատի սենյակ	8 սեղան, 16 աթոռներ, 6 շախմատի հավաքածու, Ժամացույց, լվացարան	18,29
Լաբորատորիա	Պահարաններ, Սեղան, Աթոռ, ԲՏՃՄ առարկաների դիդակտիկ նյութեր	14
Ինֆորմատիկայի կաբինետ	9 համակարգիչ, 1 պրինտեր, 1 պահարան, 12 հատ համակարգչի սեղաններ, 14 աթոռներ, Գրատախտակ, 15 հատ մեկ տեղանոց նստարան, 2 ռոբոտաշինության սարք, Շերտավարագույր, Կախիչ	52
ՆԶՊ-ի կաբինետ	12 հատ սեղան-աթոռ, 1 ուսուցչական սեղան, 1 աթոռ, 1 պահարան, 1 համակարգիչ, Դիդակտիկ	40

	պաստառներ, Շերտավարագույր	
Զինապահեստ	Ուսումնական զենքեր, Չհրկիզվող պահարան, 1 պատգարակ, 50 հակագազ, 2 սակրավորի բահ, Կրակմարիչ, Ձայնային ազդանշան	8
1-ին հարկի միջանցք	Վերանորոգված է	177
2-րդ հարկի միջանցք	Ունի վերանորոգման կարիք	155,72
Սպորտդահլիճ տանող միջանցք	Ունի վերանորոգման կարիք	75
Հանդերձարան/տղաների/	Ունի վերանորոգման կարիք	22
Հանդերձարան/աղջիկների/	Ունի վերանորոգման կարիք	22
Բուֆետ	Չի գործում, ունի վերանորոգման և շահագործման կարիք	40
Բուֆետի պահեստ	-	15
Ախտահ. նյութերի սենյակ		3
Աշակերտական խորհրդի սենյակ	4 սեղան, 15 փափուկ աթոռ, Պահարան, Շարժական գրատախտակ	12
Պահեստ՝ դահլիճներին կից	Հին իրերի պահոց	10
1-ին հարկի սանհանգույց /տղաների/	Վերանորոգված է, գործում է	7,05
1-ին հարկի սանհանգույց /աղջիկների/	Վերանորոգված է, գործում է	7,05
2-րդ հարկի սանհանգույց /տղաների/	Ունի վերանորոգման կարիք, չի գործում	7,05
2-րդ հարկի սանհանգույց /աղջիկների/	Ունի վերանորոգման կարիք, չի գործում	7,05
Դահլիճներին կից սանհանգույց/տղաների/	Վերանորոգված չէ, չի գործում	2,5
Դահլիճներին կից սանհանգույց/աղջիկների/	Վերանորոգված չէ, չի գործում	2,5
Պահակակետ		4
Օժանդակ շինություններ		
Կաթսայատուն	Չի գործում	61
Ցախատուն	Վթարային է	41

Դասասենյակներում սեղան-նստարանների դասավորվածության և թվի վերաբերյալ տվյալներ 2023թ.-ի սեպտեմբերի 1-ի դրությամբ

Դասարանը	Շարքերի քանակը	Սեղանների քանակը	Դասասենյակի մակերեսը /մ^2/
1-ին	3	6	52
2-րդ	3	9	52
3-րդ	3	7	52
4-րդ	2	4	26
5-րդ	3	14	52
6-րդ	3	12	52
7-րդ	2	4	26
8-րդ	4	11	52
9-րդ	4	14	52
10-րդ	4	14	52
11-րդ	3	8	52
12-րդ	3	9	52

Դասասենյակներն ունեն պահարաններ, գրատախտակներ, կախիչներ:

Դպրոցում առկա է լրացուցիչ սեղան-նստարաններ, անհրաժեշտության դեպքում փոխարինելու կամ համալրելու համար: Վնասվելու դեպքում անմիջապես վերանորոգվում է համապատասխան մասնագետի կողմից:

Սեղան-նստարանների հեռավորությունը լուսակիր պատից կազմում է 1մ, իսկ շարքերի և միմյանց միջև հեռավորությունը 0,9մ է: Մեկ սովորողին ընկնող նորմատիվային մակերեսը հիմնականում 2մ^2 է, ինչը մեր դպրոցում ապահովված է, նույնիսկ ավելին:

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
Ինֆորմատիկայի կաբինետի գույքի պարագաներ - 10 համակարգիչներ - 4 պրինտեր - 1 տեսացրիչ - 1 շարժական էկրան	Ժամանակակից համակարգիչներ, սարքավորումներ, էլեկտրոնային գրատախտակներ, Առարկայական էլեկտրոնային բազա
ՆԶՊ-ի կաբինետի գույք, ուսումնական նյութեր, պարագաներ - ուսումնական զենք	ՆԶՊ կաբինետի արդի ուսումնական անհրաժեշտ զենքեր և պաստառներ
Շախմատի կաբինետի անհրաժեշտ գույք և պարագաներ	
Ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության որոշակի լաբորատոր պարագաներ, դիդակտիկ նյութեր	ԲՏՃՄ առարկաների լաբորատորիաների արդի անհրաժեշտ նյութեր, պարագաներ, սարքավորումներ, ՏՀՏ-ներ
Բժշկական առաջին օգնության անհրաժեշտ պարագաներ, դեղորայք	
Սպորտային որոշակի քանակությամբ գույք	Սպորտային ժամանակակից գույքի բացակայություն
Գեղարվեստական գրքեր Դասագրքեր	Գրադարանի գույքի և ժամանակակից գրականության պակաս
Աշակերտական սեղան, աթոռներ, նստարաններ, պահարաններ, կախիչներ	
	Տեսախցիկներ
	Տեխնոլոգիայի դասաժամերի համար սարքավորումներ, հաստոցներ, կարի մեքենաներ
	Որոշ դասասենյակների և կաբինետների շերտավարագույրների պակաս

Վերլուծություն / համապատասխանություն

Դպրոցի դասասենյակներում, կաբինետներում և համապատասխան սենյակներում առկա է որոշ քանակությամբ անհրաժեշտ նյութատեխնիկական բազա: Սպորտդահլիճում, հանդիսությունների դահլիճում, գրադարանում, ճաշարանում, նախակրթարանում նույնպես առկա է որոշակի գույք և նյութատեխնիկական բազա:

Ընդհանուր առմամբ դպրոցում կրթական ծրագրերի իրականացման համար ուսուցիչների կողմից կիրառվում է առկա նշված նյութատեխնիկական բազան:Կա համապատասխանության որոշակի շեղում, քանի որ նյութատեխնիկական բազան ունի մշտական համալրման և թարմացման կարիք:

Նպատակ	. ժամանակակից համակարգիչների, նոթբուքերի ձեռք բերում . էլեկտրոնային գրատախտակների ձեռք բերում . ԲՏՃՄ լաբորատոր սարքավորումների, արդի տեխնիկայի և նյութերի ձեռք բերում . ՆԶՊ-ի կաբինետին անհրաժեշտ ժամանակակից ուսումնական զենքեր և պաստառներ . անհրաժեշտ կրթական էլեկտրոնային ռեսուրսների համալրում . տեսախցիկների տեղադրում . տեխնոլոգիայի դասաժամերի համար հաստոցներ, կարի մեքենաներ, սարքավորումներ . շերտավարագույրների ձեռք բերում . գրադարանին անհրաժեշտ ժամանակակից գրականություն և գույք . սպորտդահլիճին անհրաժեշտ գույքի ձեռք բերում

Խնդիր	. պետական բյուջեից տրամադրվող ֆինանսների պակաս . արտաբյուջետային միջոցների պակաս . մաշվածություն . տեխնիկական միջոցների անսարքություն . դիդակտիկ պարագաների, նյութերի, սարքերի մասնակի բացակայություն
Իրականացվող գործոցություն	. մասնակցել ՀՀ կառավարության կողմից սահմանված կրթական ծրագրերին՝ դրամաշնորհների ձևով . տեխնիկական սարքավորումների անսարքությունների վերանորոգման համար համագործակցել համապատասխան մասնագետի հետ . կազմակերպել վերահսկողություն ՏՀՏ-ների և այլ տեխնիկական միջոցների կիրառման նկատմամբ
Պատասխանատուներ	. տնօրեն . համակարգող . մանկավարժներ . ինֆորմատիկայի ուսուցիչ . սովորողներ
Կատարման ժամկետներ	ՏՀՏ-ների և այլ տեխնիկական միջոցների ձեռքբերում ՝ 2023-2028թթ. . համապատասխան մասնագետների հետ մշտական համագործակցություն՝ 2023-2028թթ. . ժամանակակից համակարգիչների, նոթբուքերի, էլեկտրոնային գրատախտակների և այլ տեխնիկական միջոցների ձեռք բերում՝ 2023-2028թթ. . ԲՏՃՄ լաբորատորիայի, ՆԶՊ-ի կաբինետի, տեխնոլոգիայի դասաժամերին, գրադարանին և սպորտդահլիճին անհրաժեշտ

	գույքի, սարքավորումների ձեռք բերում՝ 2023-2028թթ. . տեսախցիկների ձեռք բերում՝ 2023-2026թթ. . շերտավարագույրների ձեռք բերում՝ 2023-2025թթ.
Ռիսկեր	. ֆինանսական միջոցների բացակայություն . տեխնիկական բարձր որակավորում ունեցող մասնագետների պակաս . տեխնիկական միջոցների, սարքավորումների պիտանելիության ժամկետից շուտ շարքից դուրս գալը
Ռիսկերը մեղմացնող գործոններ	. դիմել դրամաշնորհային ծրագրերին: Համագործակցություն բարեգործների հետ . հետևողական և խիստ վերահսկողություն կազմակերպել . համապատասխան մասնագետների հետ համագործակցության ապահովում
Ակնկալվող արդյունքներ	. ժամանակակից ՏՀՏ-ների, էլեկտրոնային գրատախտակների կիրառման արդյունքում դասերի արդյունավետ և գրավիչ կազմակերպում . նոր մեթոդների կիրառում ԲՏՃՄ առարկաների վերազինված և կահավորված լաբորատորիաներում . արտադասարանական խմբակներում առարկայական օլիմպիադաների պարապմունքների և մասնագիտական կողմնորոշման համար դասերի իրականացում . դպրոցի գործունեությանը վերաբերող փաստաթղթերի ամբողջական էլեկտրոնային թվայնացում
Գնահատման չափանիշ	. որևէ գործողություն չի կատարվել-**անբավարար** . կատարվել է մասնակի-

	բավարար **.** կատարվել է մեծ մասը-**լավ** . կատարվել է ամբողջությամբ-**գերազանց**
Վերահսկողություն	. ԿԽ . Տնօրեն . Համակարգող

5. ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

15-ը մարտի 2021թ.-ի N:25 հրամանի համաձայն դպրոցում գործում է միացյալ կառավարման խորհուրդ, որը հանդիսանում է որպես կառավարման մարմին և ձևավորվում է նախարարության սահմանված կարգով: Միացյալ կառավարման խորհուրդը ձևավորված է երեք հաստատությունների միջև՝ Կաքավաձորի Մ. Մխիթարյանի անվան միջնակարգ դպրոց, Ագարակավանի միջնակարգ դպրոց և Դիանի հիմնական դպրոց: Խորհրդի անհատական կազմը հաստատում է լիազորված մարմինը: Խորհուրդը բաղկացած է 19 անդամից: Յուրաքանչյուր դպրոցից՝ 2-ական անդամ մանկավարժական խորհրդից

և 2-ական անդամ ծնողական խորհրդից: Յուրաքանչյուր համայնքից՝ 1-ական անդամ, լիազոր մարմնի կողմից՝ 4 անդամ:

Միացյալ կառավարման խորհրդի որոշմամբ ընտրվել է խորհրդի նախագահ և քարտուղար:

Միացյալ կառավարման խորհրդի նիստերը գումարվում են յուրաքանչյուր եռամսյակ մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են նաև արտահերթ նիստեր: Խորհրդի նիստերն արձանագրվում են և հրապարակվում դպրոցի պաշտոնական կայքում:

Միացյալ խորհուրդը դպրոցի տնօրենի գործունեության նկատմամբ իրականացրել է ընթացիկ վերահսկողություն՝ քննարկել է զարգացման ծրագրի հաշվետվություններն ու արդյունքները:

Միացյալ խորհրդի հաստատմանն է ներկայացվել դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները, ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի անցկացման կարգը:

Միացյալ խորհրդի անդամները ընդգրկվել են դպրոցի ներքին գնահատման հանձնաժողովում և մասնակցել ներքին գնահատմանը: Տնօրենի ներկայացմամբ միացյալ կառավարման խորհուրդը քննարկել է ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաստիքացուցակը, տարիֆիկացիոն ցուցակները, հավանության է արժանացրել և ներկայացրել լիազոր մարմնի հաստատմանը:

Խորհուրդը յուրաքանչյուր հաշվետու տարվա ընթացքում քննարկում է դպրոցի ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչականգործունեության, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները: Խորհրդը բյուջետային պարտավորությունների կատարման նպատակով իրականացրել է

վերահսկողություն բյուջեի կազմման, քննարկման և կատարման գործընթացների նկատմամբ:

Խորհրդի պահանջով տնօրենի կողմից ներկայացվել է բյուջեի կատարման մասին կիսամյակային և տարեկան հաշվետվություններ, որոնք պարունակում են՝

- Տեղեկություններ հաշվետու տարում դպրոցի բյուջեի մուտքերի և ելքերի մասին
- Տեղեկություններ հաշվետու տարում դպրոցի բյուջեի կատարած ծախսերի ուղղությունների և չափերի մասին:

Տնօրենը յուրաքանչյուր բյուջետային տարի ավարտելուց հետո, մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 15-ը բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ներկայացրել է խորհուրդ:

Ուժեղ և թույլ կողմերը

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
• Ընտրել է խորհրդի նախագահ և քարտուղար • Հաստատել է իր աշխատակարգը • Քննարկել և հավանության է արժանացրել դպրոցի ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները • Հաստատել է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին	• Նիստերի ժամանակ անդամների բացակայություն • Առաջարկությունների պասիվություն • Շահագրգռվածության պակաս

կարգապահական կանոնները, ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի անցկացման կարգը • Քննարկել է դպրոցի ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը, բյուջետային ֆինանսավորման հայտը, հաստիքացուցակը, տարիֆիկացիոն ցուցակները, արժանացրել հավանության և ներկայացվել է լիազորված մարմնի հաստատմանը:	

Նպատակ	• Հետևողական վերլուծության և օբյեկտիվ եզրակացության ներկայացում զարգացման ծրագրի կատարման վերաբերյալ: • Դպրոցի հետ արդյունավետ համագործակցություն • Առաջարկությունների ներկայացում խորհրդի անդամների կողմից:

Խնդիր	• Նիստերի ժամանակ անդամների բացակայություն • Առաջարկությունների պասիվություն • Պասիվություն դպրոցում գործող խորհրդակցական մարմինների հետ
Իրականացվող գործողություն	• Ապահովել աշխատանքային առողջ միջավայր • Խորհրդի նախագահի կողմից անդամների լիազորությունների և պարտականությունների իրազեկում: • Ապահովել ժողովրդավարության սկզբունքները: • Միացյալ խորհրդի անդամներին ապահովել միջոցներ հեռավար նիստեր հրավիրելու համար
Պատասխանատուներ	Տնօրեն Միացյալ կառավարման խորհուրդ
Կատարման ժամկետներ	• Յուրաքանչյուր ուստարվա ավարտին ամենամյա եզրակացության ներկայացում: • 3 տարիների ժամանակահատվածում խորհրդի գործունեության վերահսկողություն: • Լիազորությունների ժամանակահատվածում առաջարկությունների ներկայացում

Ռիսկեր	• Խորհրդի լիազորությունների դադարում՝ ժամկետի լրանալու պատճառով: • Հաճախակի փոփոխվող օրենքներին ոչ ճիշտ արձագանքում: • 3 անգամ նիստերին չմասնակցելու, անվստահության ձևավորման կամ մահվան դեպքում խորհրդի անդամի լիազորությունների դադարեցում:
Ռիսկերը մեղմացնող գործողություններ	• Իրազեկել հաճախակի փոփոխվող օրենքների մասին: • Կազմակերպել և իրականացնել արդյունավետ աջակցություն, վերահսկողություն, ուսումնական և դաստիարակության գործունեության իրականացման համար տնօրենի և խորհրդի համագործակցության արդյունքում: • Իրենց լիազորությունների սահմաններում հստակեցնել անդամների գործունեությունը: • Ժողովրդավարական սկզբունքների ապահովում • Վերահսկողության և մշտադիտարկման արդյունքում օբյեկտիվ եզրակացություն ներկայացնել զարգացման ծրագրի կատարման մասով:
Ակնկալվող արդյունքներ	• Տնօրենի և դպրոցի խորհրդակցական մարմինների հետ արդյունավետ

	համագործակցություն: • Ներդրումային միջավայրի ձևավորման գործում համագործակցություն խորհրդի կողմից: • Խորհրդի նիստերին առկա կամ հեռավար ակտիվ մասնակցություն:
Գնահատման չափանիշ	• Նիստերն անցկացնելու համար խորհուրդը չի ապահովում անհրաժեշտ անդամների քվորում- **անբավարար** • Խորհրդի հրավիրված նիստերին մասնակցում են առնվազն կեսից ավելի անդամ, կայանում են նիստերն առանց որևէ նախաձեռնության և իրատեսական առաջարկությունների – **բավարար** • Խորհրդի նիստը իրավազոր է, քննարկվել են տնօրենի կողմից ներկայացված հաշվետվությունները, որի հիման վրա ներկայացվել են առաջարկություններ- **լավ** • Խորհրդի նիստը իրավազոր է, գործում է հաստատված աշխատակարգը, քննարկել է հաշվետվությունները, ներկայացրել է առաջարկություններ , արդյունքում ներկայացրել է օբյեկտիվ եզրակացություն զարգացման ծրագրի կատարման մասով 1 ուսումնական տարվա համար, ապահովել

վերահսկողություն	ներդրումային միջավայր – **գերազանց** • Լիազորված մարմին Միացյալ կառավարման խորհրդի նախագահ

6. ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Համագործակցության, փորձի փոխանակման, քննարկումների արդյունքում է ձևավորվում արդյունավետ աշխատանքն ու վերջնարդյունքը: Համագործակցությունը աշխատանքի համատեղ կատարումն է, որևէ խնդրին կամ առաջադրանքին լուծում գտնելու համատեղ մասնակցությունը, փոխօգնությունը:

Համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ խիստ անհրաժեշտ պայման է:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

Դպրոցն ակտիվ համագործակցում է համայնքի հետ, որի շրջանակներում կազմակերպվում է դպրոցի աղբահանությունը:

Դպրոցը մասնակցում է համայնքի կողմից կազմակերպված շաբաթօրյակներին, համայնքապետարանի տարածքում գտնվող զոհվածների հուշահամալիրի մաքրման և ծաղիկների խնամքի աշխատանքներին: Դպրոցը տարեկան երկու անգամ մասնակցում է համայնքապետարանի կազմակերպած շաբաթօրյակին, որի շրջանակներում մաքրվում է գյուղ մտնող 5 կմ ճանապարհը, իսկ 2019թ-ին մասնակցել են այդ ճանապարհի երկու կողմում

կատարվող ծառատունկին: Մասնակցել են նաև գյուղից ծառերին հասցվող ջրի ջրագծի աշխատանքներին:

Համայնքապետարանի կողմից կազմակերպվել է ֆուտբոլի մրցաշար հարևան գյուղերի միջև՝ նվիրված զոհված ազատամարտիկներին, որի շրջանակներում հաղթող է ճանաչվել մեր դպրոցի ավագ դասարանների աշակերտները, ովքեր համայնքապետարանի կողմից պարգևատրվել են պատվոգրերով և հուշամեդալներով:

Համագործակցությունը բուժքրոջ հետ համայնքի և դպրոցի համագործակցության արդյունքում համայնքի բուժքրոջ կողմից կատարվում են հաճախակի այցելություններ դպրոցի սանիտարահիգիենիկ պայմանների և սովորողների առողջության ստուգման և պահպանման ուղղություններով:

Դպրոցը , օրենքի սահմաններում, համագործակցում է մարզպետարանի հետ, որն էլ համարվում է **դպրոցի լիազորված մարմին:** Մարզպետարանում , համայնքում, դպրոցում կազմակերպված միջոցառումներին եղել է նշվածների փոխադարձ մասնակցությունը: Լիազորված մարմնի կողմից դպրոցում կատարվել են վերանորոգման աշխատանքներ և տրամադրվել է որոշակի գույք:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

Համագործակցությունը սերտ է դպրոցի և ծնողական համայնքի հետ, որի հիմնական կապող օղակը ծնողական խորհուրդն է: Ծնողները մշտապես հետաքրքրված են իրենց երեխաների ուսումնադաստիարակչական, առաջադիմության, մասնագիտական կողմնորոշման, դասարանի պայմանների հարմարավետության հարցերով:

Ծնողների և դպրոցի համագործակցության արդյունքում կազմակերպվում են սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ:

Դպրոց- ուսուցիչ- ծնող համագործակցության արդյունքում առավել արդյունավետ է դառնում վատ վարք դրսևորած երեխայի դաստիարակության հարցը:

Ծնողներն ակտիվորեն մասնակցում են ծնողական ժողովներին, բաց դասերին, արտադասարանական միջոցառումներին, սննդի կազմակերպման աշխատանքներին:

Ծնողների, ծնողական խորհրդի, ուսուցիչների համատեղ աշխատանքների արդյունքում մշտապես ուշադրության կենտրոնում են գտնվում ծնողազուրկ, սոցիալապես անապահով, այլազգի, հաշմանդամ երեխաները : Աշխատանքներ են տարվում բոլոր սովորողների հետ մարդասիրության, հանդուրժողականության և սոցիալական հավասարության վերաբերյալ:

Ծնողական խորհրդի համագործակցությամբ ծնողները մասնակցում են դպրոցում կազմակերպվող տարաբնույթ միջոցառումներին, շաբաթօրյակներին և վերանորոգման աշխատանքներին:

Դպրոցի նոր ջրամատակարարման աշխատանքներին իրենց ակտիվ մասնակցությունը ցուցաբերել են նաև ծնողները:

Ծնողների, համայնքի և բարերարների կողմից դպրոցում վերանորոգվել է չորս դասասենյակ, որից երեքը անվանակոչվել են Արցախյան ազատամարտում զոհված հերոսների անուններով:

Համագործակցության արդյունքում դպրոցը կատարում է աշխատանքներ որոնք ուղղված են օգնելու ծնողազուրկ, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին: Մասնավորապես կատարվում են դասագրքերի արժեքների զեղչեր: Ծնողների և ուսուցիչների համատեղ ջանքերի շնորհիվ տրամադրվում է որոշակի հագուստ և սնունդ:

Ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի հաստատած նոր կարգի և ծնողների համաձայնությամբ տարվում են աշխատանքներ երկարօրյա ուսուցում կազմակերպելու համար, հիմնականում ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համար:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

Դպրոցը գործառույթների շրջանակներում համագործակցում է կրթության կառավարման մարմինների հետ՝

- ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ
- Մարզպետարանի՝ որպես լիազոր մարմին
- ԿՏԱԿ- ի
- Emis.am-ի
- ԿՁՆԱԿ –ի
- ՏՄԱԿ –ի
- ԳԹԿ –ի

Հաստատությունը իրականացնում է կրթության կառավարման մարմինների կողմից հաստատված որոշումները, հրամանները և կարգադրությունները:

ԿՏԱԿ –ի հետ համագործակցության շրջանակներում կարողանում ենք ժամանակին ապահովել և կազմակերպել նրա կողմից ներկայացված ուսումնական գործընթացին վերաբերվող էլեկտրոնային գրանցումները:

Emis.am - 2013 թվականից Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում ներդրվել և գործում է «Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգ» էլեկտրոնային ծրագիրը : Հետագայում այն համալրվեց որոշ բաժիններով և դարձավ «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ» որի համագործակցության արդյունքում իրականացվում են էլեկտրոնային մատյանների , օրագրերի գրանցումներ: Հնարավորություն է տալիս իրականացնել սովորողի առցանց դպրոց ընդունման գործընթացը:Վերահսկել տեղափոխման գործընթացը մի կրթական հաստատությունից այլ կրթական հաստատություն և այլն:

ԿՁՆԱԿ հիմնադրամի հետ հանագործակցության արդյունքում կազմակերպվում են ուսուցիչների՝ համապատասխան ծրագրերով վերապատրաստումներ:

Համագործակցության արդյունքում ձևավորվում է կրթական ծրագրերի, ՀՊՁ- ի պահանջներին համապատասխան ուսումնական գործընթացի կազմակերպում:

ՏՄԱԿ- ը մանկավարժահոգեբանական ծառայություն է մատուցում մեր դպրոցում, որտեղ սովորում են երկու գնահատված ԿԱՊԿՈՒ երեխա:

ՏՄԱԿ –ի հետ համագործակցելիս աջակցություն է տրվում ոչ միայն ԿԱՊԿՈՒ երեխաներին, այլև ուսուցիչներին և ծնողներին՝ խորհրդատվության տեսքով, ինչպես նաև փաստաթղթավորման մասով:

ՏՄԱԿ –ի կողմից կազմակերպվել են սեմինարներ դպրոցի ուսուցիչների և վարչական աշխատողների համար, թեման եղել է՝ <<ԿԱՊԿՈՒ սովորողների ուսումնառության ապահովումը>>:

ՏՄԱԿ – ը համագործակցում է առարկայական ուսուցիչների հետ, օժանդակում է նրանց լրացնել երեխաների անհատական ուսուցման պլանը՝ ԱՈՒՊ:

ՏՄԱԿ-ի բազմամասնագիտական թիմի կողմից դպրոցում լրացվում է մանկավարժահոգեբանական ծառայությունների պլանը՝ ՄԱԾԱՊ:

ԳԹԿ-ի հետ համագործակցության արդյունքուն դպրոցում կազմակերպվում են ավարտական, պետական ավարտական և միասնական քննությունները:

Համագործակցության արդյունքում կատարվում են աշխատանքներ ընթացիկ գնահատումների և հանրակրթության բնագավառի որակի հսկողության հետ կապված:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Կաքավաձորի Մ. Մխիթարյանի անվան միջնակարգ դպրոցը համագործակցում է <<ԱՅԲ հիմնադրամի>> Ազգարային համալսարանի, Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի <<Ձևափոխվող կրթություն>> կրթական հիմնադրամի, ԱԻՆ փրկարարական ծառայության, զինկոմիսարիատի, ոստիկանության, ամբուլատորիայի, համայնքի բուժքրոջ, <<ԱՐՄԱԹ>> ինժեներական լաբորատորիայի, World Wision կազմակերպության, ՄԱԿ –ի գրասենյակի <<Տաք սնունդ>> կազմակերպության հետ, ավագ դպրոցների և միջին մասնագիտական հաստատությունների հետ:

<<ԱՅԲ>> հիմնադրամ - կազմակերպում է <<Մեղու>> և <<Կենգուրու>> մրցույթները, որի արդյունքում ունենք հատուկ և լավագույն մրցանակակիրներ:

Բուհ- երի հետ եղել է փոխադարձ համագործակցություն սովորողների մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ:

Ձևափոխվող կրթություն – համագործակցության արդյունքում երեք ուսուցիչ մասնակցել են մեթոդմիավորման նախագահի վերապատրաստրաստումներին:

ԱԻՆ –ի կողմից պարբերաբար կատարվում են ստուգայցեր դպրոցի անվտանգության վերաբերյալ, կատարվում են տարհանումներ, ավագ դասարանների աշակերտների հետ անցկացվում են զրույցներ, իրազեկումներ՝ աղետների վերաբերյալ:

Զինկոմիսարիատ- համագործակցության արդյունքում կազմակերպվում են նախազորակոչային տարիքի տղաների բուժզննում: Կազմակերպվում են 11-րդ դասարանի տղաների և աղջիկների մրցույթ տարածաշրջանի դպրոցների հետ <<Լավագույն նշանառու >> անվանակարգում:

Ոստիկանություն- պարբերաբար կազմակերպվում են այցելություններ անչափահասների գծով տեսուչի կողմից, որի շրջանակներում լինում են զրույցներ բարձր դասարանների աշակերտների հետ՝ ծխախոտի, ալկոհոլի, թմրանյութերի և այլ վնասակար սովորությունների վերաբերյալ:

Ամբուլատորիա, համայնքի բուժքույր- կատարվում են հաճախակի այցելություններ, կանխարգելիչ միջոցառումներ ՝ պատվաստումների, ինֆեկցիոն հիվանդությունների, սուր շնչառական հիվանդությունների, դպրոցի սովորողների սանիտարահիգիենիկ վիճակի վերաբերյալ:

<<ԱՐՄԱԹ>> ինժեներական լաբորատորիայի կողմից դպրոցում կազմակերպվում է ռոբոտաշինության դասընթաց, որտեղ հաճախում են 23 սովորող:

ՄԱԿ –ի գրասենյակի հետ համագործակցության արդյունքում դպրոցում կազմակերպվում է << Տաք սնունդ>> ծրագիրը՝ նախակրթարանի և առաջինից չորրորդ դասարանների երեխաների համար:

World Wision- համագործակցության արդյունքում ստեղծվել է <<ԻՄՓԱՔԹ>> ակումբը, որը զբաղվել է համայնքի և դպրոցի զարգացմանն ուղղված աշխատանքներով: Եղել են նաև նյութական աջակցություն, գույքի և ուսումնամեթոդական ձեռնարկների տեսքով:

Ուժեղ և թույլ կողմեր

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
Համագործակցությունները •ՀՀ ԿԳՄՍՆ •ՀՀ Արագածոտնի մարզպետարան •Համայնք •ԳԹԿ •ՏՄԱԿ •ԿՁՆԱԿ •ԿՏԱԿ •Emis.am •Ձևափոխվող կրթություն •<<ԱՅԲ>> հիմնադրամ •ԱԻՆ •ԲՈՒՀ-եր •Ոստիկանություն •Ամբուլատորիա •<<Տաք սնունդ>> •World Wision	•Բարերարների բացակայություն •ՀՀ կառավարության կողմից սահմանված դրամաշնորհային մրցույթների մասնակցություն •Համագործակցության պասիվություն

Ըստ վերը նշված փաստերի համագործակցության արդյունքում վերջին տարիներին բարելավվել են դպրոցի շենքային պայմանները, համալրվել է նյութատեխնիկական բազան, իրականացվել են սովորողների ուսման որակի բարձրացմանը նպաստող կրթական ծրագրեր, միջոցառումներ, իրազեկումներ, ստեղծվել է համագործակցության հուսալի միջավայր:

Նպատակ	•Որակյալ կրթության ապահովում •Սովորողների կարողությունների, հմտությունների ձևավորում

	•Դպրոցը՝ որպես համայնքի մշակութային, սպորտային կենտրոն •Մասնագիտական կողմնորոշում •Արտադպրոցական դաստիարակության զարգացում •ՀՀ ԿԳՄՍՆ –ի , լիազորված մարմնի, համայնքի հետ կրթական քաղաքականության ապահովում •Ծնողական համայնքի՝ որպես շահառու մարմին, ինտեգրում կրթական զարգացմանը •Համագործակցության արդյունքում դպրոցի մասնակի վերանորոգում •Արհեստանոցների և լրացուցիչ դասասենյակների կառուցում:
Խնդիր	•Արհեստանոցների և լրացուցիչ դասասենյակների կառուցում •Նոր դրամաշնորհային ներդրումներ
Իրականացվող գործողություններ	•Վերը նշված բոլոր կազմակերպությունների հետ շարունակել փոխշահավետ համագործակցությունները; •Համագործակցության շրջանակներն ընդլայնել •ՀԿ- ների հետ իրականացնել ծրագրային համագործակցություն •Ապահովել արտաբյուջետային և բյուջետային ֆինանսական միջոցների շարունակական արդյունավետ և խնայողաբար օգտագործում •Կառուցել արհեստանոցներ և լրացուցիչ դասասենյակներ նոր համագործակցությունների շրջանակներում: •Ապահովել կրթական ծրագրերի •շրջանակներում համագործակցություն՝ շահառու մարմինների հետ:
Պատասխանատուներ	Տնօրեն, համակարգող, խորհրդակցական մարմիններ, համագործակցող մարմիններ
Կատարման ժամկետներ	• Կրթության կառավարման մարմինների հետ- ամբողջ գործունեության ընթացքում • Տեղական ինքնակառավարման մարմինների հետ – նպատակների և գործառույթների շրջանակներում:

	• Շահառու մարմինների հետ- ըստ նպատակի և սահմանվող ժամանակացույցի
Ռիսկեր	• Պատրաստակամության բացակայություն • Համագործակցող կազմակերպությունների հետ պայմանագրի անսպասելի դադարեցում; • Ֆորսմաժորային իրավիճակ
Ռիսկերը մեղմացնող գործողություններ	• Համագործակցությունների բարելավմանն ուղղված գործողություններ; • Իրականացնել պայմանագրերի ճիշտ ուսումնասիրություն • Իրականացնել համապատասխան գործողություններ՝ ըստ անհրաժեշտության:
Ակնկալվող արդյունքներ	• Ժամանակակից և մրցունակ դպրոց • Ուսման բարձր որակ • Համագործակցային վստահելի միջավայր • Արժեքային համակարգի զարգացում սովորողների մոտ • Շարունակական ներդրումներ ծնողական համայնքի կողմից • Արհեստանոցներ և լրացուցիչ դասասենյակներ
Գնահատման չափանիշ	• Ոչ մի համագործակցություն չի նախաձեռնվել- **անբավարար** • Շարունակվում են վերը նշված համագործակցությունների որոշ մասը- **բավարար** • Շարունակվում են վերը նշված համագործակցությունները- **լավ** • Արդյունավետ շարունակվում են վերը նշված համագործակցությունները, ձեռք բերված նոր համագործակցությունների արդյունքում կատարվել են բոլոր ծրագրերն ու նպատակները -**գերազանց**
Վերահսկողություն	• Լիազորված մարմին • ԿԽ • Տնօրեն • Համակարգող

7. ԴՊՐՈՑԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Դպրոցի մանկավարժական համակազմի որակավորման բարձրացման հիմնական նպատակն է զարգացնել մանկավարժի մասնագիտական կարողությունները, հմտությունները՝ մանկավարժական գործընթացի և դրա արդյունքների համակարգային արտացոլման համար: Մանկավարժի մասնագիտական զարգացման և պահանջվող մակարդակում դրանց պահպանման ձևերը երկուսն են՝ ինքնակրթության - ինքնազարգացման և վերապատրաստումների միջոցով: Վերապատրաստումները և ինքնազարգացումը հնարավորություն են տալիս ուսուցչին իր մասնագիտական , գիտելիքների, աշխատանքային գործունեության, կարողությունների, պատասխանատվության մակարդակի բարձրացմանը, այսինքն ապահովում է նաև մասնագիտական չափանիշների համապատասխանությունը:

Կաքավաձորի Մ. Մխիթարյանի անվան դպրոցը մեծ աշխատանք է տանում մանկավարժական համակազմի որակի բարձրացման և կատարելագործման համար:

Դպրոցում աշխատում են բարձրագույն կրթությամբ, փորձառու, հմուտ, բարեխիղճ մանկավարժներ: Գրեթե բոլորն ունեն 5 և ավելի տարվա փորձ:

Դպրոցում աշխատում է 28 ուսուցիչ, որից 25-ը ունեն բարձրագույն կրթություն, 3-ը՝ միջին մասնագիտական:

Բոլոր ուսուցիչները վերապատրաստվել և ատեստավորվել են նոր ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան:

Դպրոցում կազմակերպվում են վերապատրաստումներ, խորհրդատվություններ ուսուցիչների համար:

Փորձի փոխանակման նպատակով ուսուցիչների կողմից կատարվում են փոխադարձ դասալսումներ: Դասալսումներ են

կատարվում նաև վարչական աշխատողների կողմից, իրականացվում են մշտադիտարկումներ, կազմակերպվում են բաց դասեր:

2020թ-ին, համավարակի պայմաններում, ուսուցիչները հեռավար ուսուցման ժամանակ իրենց կարողությունները բարելավեցին ՏՀՏ դաշտում:

Ուսուցման գործընթացում կիրառում են ժամանակակից մեթոդներ և հնարքներ, ՏՀՏ գործիքներ, որոնք դասն ավելի հետաքրքիր ու արդյունավետ են դարձնում:

Դպրոցում գործում են Լեզուներ, Տարրական, ԲՏՃՄ առարկաների մեթոդմիավորումներն՝ ըստ իրենց գործառույթների: Կազմակերպվում են մ/մ նիստեր, բաց դասեր, փոխադարձ դասալսումներ, վիկտորինաներ, միջոցառումներ, փորձի փոխանակում, մեթոդական զեկուցումների ընթերցում և քննարկում:

Բոլոր ուսուցիչները տիրապետում են գնահատման նոր ձևերին ու չափորոշիչներին:

Համագործակցում ենք ԿՁՆԱԿ –ի, ԿՏԱԿ –ի , տարածաշրջանի դպրոցների հետ;

Ուսուցիչների 70%-ը կարողանում է օգտվել ՏՀՏ – ներից: Դասացուցակը կազմված է այնպես, որ յուրաքանչյուր ուսուցիչ , իր առարկան դասավանդելիս, հնարավորություն ունենա դասը վարելու նաև համակարգչային կաբինետում՝ օգտվելով ՏՀՏ- ներից:

Ուսուցիչների 50 %-ը դասերի ժամանակ կիրառում են նորարարություններ, այդ թվում՝ ինտերակտիվ, աշակերտակենտրոն մեթոդներ: Անհրաժեշտության դեպքում ուսուցիչները իրականացնում են հեռավար կամ համակցված/ հեռավար ուսուցում՝ սովորողների առողջական կարիքների և բացակայությունների դեպքում:

Ուսուցիչները մասնակցել են նաև ՏՄԱԿ- ի կողմից կազմակերպված համընդհանուր ներառական կրթություն իրականացնելու համար վերապատրաստմանը:

Դասավանդող բոլոր ուսուցիչները կարողանում են ԿՏՀ-ում իրականացնել էլեկտրոնային տարբերակով համապատասխան փաստաթղթերի վարում:

Տնօրինության և առարկայական մեթոդմիավորումների կողմից կատարվում են ուսուցիչների ինքնազարգացմանը ուղղված

համապատասխան խթանող աշխատանքներ; Ինչպես նաև ՏՀՏ – ներից օգտվել դժվարացող և նորարարություններ չկիրառող ուսուցիչների հետ:

Դպրոցում ունենք 1 տարրակարգ ունեցող ուսուցիչ, կամավոր ատեստավորման շեմը հաղթահարած 1 ուսուցիչ, կամավոր ատեստավորման շեմը հաղթահարած միջին մասնագիտական կրթությամբ 1 ուսուցիչ, ՀՀ նախագահի կողմից << Լավագույն ուսուցիչ >> մրցանակին արժանացած 1 ուսուցիչ:

Դպրոցը չունի մենթոր, բայց համագործակցում է ուրիշ դպրոցների մենթորների հետ:

Մանկավարժական համակազմն ըստ տարիքային ցուցանիշների

Ուսուցիչների թիվն ըստ տարիքային բաշխվածության	2020-2021	2021-2022թ	2022-2023	2023-2024
ընդհանուր	27	27	27	28
Մինչև 30 տարեկան	3	3	2	2
30- 40 տարեկան	4	4	4	4
41- 50 տարեկան	5	6	6	6
50- 55 տարեկան	6	4	4	4
56 տարեկան և ավելի	9	10	11	12



Մինչև 30 տարեկան- 7%

30- 40 տարեկան- 14%

41- 50 տարեկան -21%

50- 55 տարեկան -14%

56 տարեկան և ավելի - 42%

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
• Պատասխանատու և փորձառու մանկավարժներ • Համապատասխան որակավորմամբ և բարձրագույն կրթությամբ կադրեր • Դասավանդող բոլոր ուսուցիչներն անցել են հերթական պարտադիր ատեստավորումը՝ ըստ կազմված ժամանակացույցի: • Արտադասարանական խմբակների արդյունավետ պարապմունքների կազմակերպում • Տարրակարգ ունեցող ուսուցիչ	• Դասագրքի մշակման և կազմման մասնակից ուսուցիչ • Երիտասարդ կադրերի պակաս • Տարեց ուսուցիչների կողմից ՏՀՏ – ների վատ տիրապետում • Ուսուցչի, որպես առաջնորդի, սովորողների կողմից նախագծային աշխատանքների կատարման խրախուսում • Սովորողների ուսուցման և գնահատման նոր մեթոդների կիրառման հմտությունների զարգացում:

• Կամավոր ատեստավորման շեմը հաղթահարած 2 ուսուցիչ • << Լավագույն ուսուցիչ >> մրցանակին արժանացած 1 ուսուցիչ: • Մեթոդմիավորումների համագործակցված աշխատանք:	

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Վերլուծության արդյունքում դպրոցում դասավանդող բոլոր մանկավարժներն ունեն համապատասխան որակավորմամբ բարձրագույն կրթություն, ընդունվել են աշխատանքի Կարգի համաձայն: Բոլորը ատեստավորված են : Մշտադիտարկումների արդյունքը ցույց է տվել, որ դասավանդող բոլոր ուսուցիչները ժամանակին կազմում են թեմատիկ, օրվա դասի պլանները, որոնց համապատասխան վարում են իրենց դասերը՝ օգտագործելով ՏՀՏ –ներ և այլ ուսումնական պարագաներ համապատասխան կաբինետներում և լաբորատորիաներում:

Այսինքն, կա համապատասխանություն ծրագրի կատարողականության, ուսուցիչների և համապատասխան ենթակառուցվածքների, նյութատեխնիկական բազայի միջև, սակայն կա որոշակի շեղում մասնագիտական զարգացման չափանիշներին համապատասխան: Կամավոր ատեստավորման ցանկություն ունեցող ուսուցիչների պակաս կա: Տարեց ուսուցիչները դժվարանում են ՏՀՏ –ների և նորարարությունների կիրառման հարցում: Դպրոցն ունի երիտասարդ կադրերի պակաս:

Նպատակներ	• Բարձրացնել մանկավարժական համակազմի մասնագիտական որակավորումը; • ՏՀՏ գործիքներով աշխատելու կարողությունների բարելավում: • Ներգրավվածություն և աջակցություն երիտասարդ սկսնակ ուսուցիչներին; • Ավագ, վերապատրաստող, հմուտ

	հետազոտող ուսուցիչ; • Կամավոր ատեստավորում անցած ուսուցիչներ մինչև 40 %: • Որակավորման տարրակարգ ունեցող ուսուցիչներ մինչև 30 %: • Ուսումնական գործընթացում ժողովրդավարության սկզբունքների կիրառություն: • Մանկավարժների կողմից սովորողների մասնագիտական կողմնորոշման դիրքորոշման ձևավորման ապահովում:
Խնդիրներ	• Մեթոդական նյութերի տրամադրում, խորհրդատվական սեմինարների, վերապատրաստումների կազմակերպում: • Մանկավարժների բարոյահոգեբանական մտածողության բարձրացում: • Կադրերի վերապատրաստում, փորձառու ուսուցիչների կողմից օրինակելի դասերի կազմակերպում, դասալսումների իրականացում: • Կամավոր ատեստավորման և որակավորման տարակարգի նկատմամբ ուսուցիչների անվստահություն: • ՏՀՏ –ների ոչ բավարար քանակություն, նոր մեթոդների և տեխնոլոգիաների դժվար ընկալում: • Սովորողների ուսուցման և գնահատման նոր մեթոդների կիրառման հմտությունների ոչ բավարար իրականացում: • Փորձառու ուսուցիչ, ով կխրախուսի սովորողների կողմից նախագծային աշխատանքների կատարումը: • Ուսուցիչների կողմից ինքնազարգացման և ինքնակրթության պայմանների և մոտիվացիայի պակաս:
Իրականացվող գործողություն	• Կազմակերպել տարբեր ձևաչափերի վերապատրաստումներ նոր մեթոդների և տեխնոլոգիաների, ՏՀՏ -ների կիրառման կարողությունների զարգացման ուղղությամբ: • Իրականացնել ՏՀՏ- ների արդիականացում, համալրում, ձեռք բերել էլեկտրոնային գրատախտակներ և այլ

	անհրաժեշտ տեխնոլոգիաներ: • Ստեղծել նպաստավոր պայմաններ կամավոր ատեստավորման , որակավորման տարակարգի ակտիվ մասնակցության համար: • Ստեղծել ակտիվ համագործակցության պայմաններ մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական զարգացման համար: • ՀՊՉ –ի պահանջներին համապատասխան աջակցել ուսուցիչներին դասերի պլանավորման, վարման, գնահատման նոր ձևերի կիրառման հարցում:
Պատասխանատուներ	Տնօրեն Ուսումնական մասով տեղակալ մ/մ նախագահներ մանկավարժներ
Կատարման ժամկետներ	• Ատեստավորումների և վերապատրաստումների մասնակցություն ամբողջ տարիների ընթացքում • Որակավորման տարակարգին մասնակցող ուսուցիչներ 2024-2027թթ • Ուսուցիչների ինքնազարգացման և ինքնակրթությանն ուղղված գործողություններ ամբողջ տարիների ընթացքում
Ռիսկեր	• Մանկավարժների շահագրգռվածության և նախաձեռնության պակաս • Տարեց մանկավարժների գերակշիռ մաս • Երիտասարդ կադրերի պակաս • Անհատական սոցիալական և առողջական վիճակ • Ֆորսմաժորային իրավիճակ
Ռիսկերը մեղմացնող գործողությունները	• Տարբեր խրախուսական մեթոդների կիրառում: • Մանկավարժական համակազմը համալրել երիտասարդ կադրերով , միևնույն ժամանակ խրախուսել տարեց հմուտ մանկավարժներին: • Դպրոցում ապահովել առողջ, բարոյահոգեբանական միջավայր: • Համապատասխան գործողություններ՝

	ելնելով ֆորսմաժորային իրավիճակներից:
Ակնկալվող արդյունքներ	• Դասավանդող ուսուցիչների մասնագիտական բարձր ցուցանիշ, որակյալ կրթություն • Վերապատրաստված, կամավոր ատեստավորված, որակավորման տարակարգ ունեցող մանկավարժների թվի աճ; • Մանկավարժների կողմից ՏՀՏ – ների և հաղորդակցական տեխնոլոգիաների լիարժեք իմացություն, արհեստավարժ կիրառում, դրա հիման վրա նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառմամբ արդյունավետ դասեր: • Դպրոցում երիտասարդ կադրերի ավելացում:
Գնահատման չափանիշներ	• Ոչինչ չի կատարվել- **անբավարար** • Տվյալ ոլորտի նպատակները կատարվել են մասնակի- **բավարար** • Նպատակների կեսից ավելին իրագործվել է **– լավ** • Թվարկված նպատակները կատարվել են ամբողջությամբ - **գերազանց**
վերահսկողություն	• Լիազորված մարմին • Տնօրեն, ԿԽ

8. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ ԵՎ ԱՅԼ ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ և ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Արդի դարաշրջանում կարևորվում է ՏՀՏ տեխնոլոգիաների ներդրումը դասապրոցեսում: Դպրոցի վարչական աշխատողները և մանկավարժները պարբերաբար մասնակցել են վեբինարների, սեմինարների՝ միտված նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը դպրոցում: Հաստատությունում ՏՀՏ –ների օգտագործումը ընդգրկում է կրթական ծրագրերի իրականացման բոլոր ուղղությունները՝

կառավարում, վարչատնտեսական գործունեություն, ուսումնադաստիարակչական աշխատանքներ;

Հասարակության դինամիկ զարգացումը պահանջում է կրթական գործընթացում կիրառել տեխնոլոգիաների և մեթոդների փոփոխությունների անհրաժեշտություն, միևնույն ժամանակ համապատասխան տեխնոլոգիաների և նորարարությունների շարունակական թարմացում և համալրում:

Նորարարությունների ներդրման գործընթացում հաճախ բախվում ենք մի շարք խնդիրների՝ մասնավորապես տարեց ուսուցիչների մոտ առկա կարծրատիպերը, նորի հանդեպ դժվար ընկալումը, մեթոդների ոչ ճիշտ կիրառումը, համագործակցությունների մոտիվացիայի պակաս, օգտագործվող ՏՀՏ –ների և այլ կրթական տեխնոլոգիաների քիչ քանակություն:

Նորարարությունների ընկալման և կիրառման համար անհրաժեշտ է հաճախակի կազմակերպել վերապատրաստումներ, վեբինարներ, սեմինարներ, համագործակցում և փորձի փոխանակում հատուկ մասնագետների և համայնքի դպրոցների հետ:

Կրթության գործընթացում հիմնական նորամուծություններն են՝ աշակերտակենտրոն ուսուցումը, ՏՀՏ –ները, նախագծային և հետազոտական գործունեությունը: Աշակերտակենտրոն ուսուցումը նորարարական մոտեցում է , որը բացահայտում է յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկություններն ու կարիքները, ինչի հիմքով էլ կազմվում են ուսումնական պլանները:

Աշակերտակենտրոն ուսուցման տեխնոլոգիան իր մեջ ներառում է մեթոդներ, որոնք համապատասխանում են հետևյալ պահանջներին՝

- ՈՒշադրության կենտրոնում պահել սովորողի անհատական զարգացմանն ուղղված խնդիրները;
- Խթանել սովորողի ստեղծագործական գործունեության ունակության զարգացմանը:
- Սովորողին տրամադրել անհրաժեշտ տարածք և բավարար ազատություն՝ ուսուցման բովանդակության, վարքագծի կանոնների, փոխհարաբերությունների և գիտելիքների ձեռքբերման եղանակի, որոշումների կայացման և ստեղծագործական ուղղության, անկախ ընտրություն կատարելու համար:

Մյուս նորարարությունը ժամանակակից ՏՀՏ- ներն են: ՏՀՏ – ները կրթության մեջ ուսուցման այն ձևն է, որի ընթացքում օգտագործվում են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները՝ աջակցելու, բարելավելու տեղեկատվության տրամադրումը: ՏՀՏ –ների օգտագործումը դասերի ընթացքում ապահովում է ուսուցիչների աշխատանքի և սովորողների ուսուցման բազմազանությունը, զարգացնում է սովորողների ուշադրությունը և մեծացնում անհատի ստեղծագործական ներուժը, ինչպես նաև՝ խնայում ժամանակը:

ՏՀՏ – ների կիրառման հիմնական նպատակն է՝

- Դարձնել ուսումնական գործընթացն ավելի բազմազան և հետաքրքիր:
- Հասնել դասավանդման ավելի արդյունավետ և ժամանակակից մեթոդների;
- Սովորողների մոտ ամրապնդել սովորելու հանդեպ հետաքրքրության և կենտրոնանալու մոտիվացիան:
- Խնայել ժամանակը և նպաստել սովորողների շրջանում տեղեկատվական գրագիտության զարգացմանը:
- Հասնել աշխատանքի պլանավորման և համակարգման նոր մակարդակի:

Ուսուցման մեթոդներից է **նախագծային և հետազոտական** աշխատանքների կազմակերպումը, որի կիրառման արդյունքում բարձրանում է սովորողների ստեղծագործական մտածողության զարգացումը, ուսման որակի բարձրացումը, մասնագիտական կողմնորոշման ցուցանիշը, իրենց անհատականության և սոցիալականացման դրսևորման արժևորումները: Այն իրականացվում է ինչպես անհատական, այնպես էլ՝ խմբային տարբերակով:

Ուսուցման մեթոդը կիրառման մեջ է մտել 2023թ-ից, դպրոցի ուսուցիչներն անցել են համապատասխան վերապատրաստումներ ԿԶՆԱԿ –ի կողմից:

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
• Համապատասխան վերապատրաստումներ անցած ուսուցիչներ	• Լինգոֆոնիայի կաբինետի բացակայություն • Արդի ՏՀՏ – ների,

• ՏՀՏ – ների, նոր մեթոդների, տեխնոլոգիաների կիրառումդասերի ընթացքում • Ուսուցման կազմակերպում հեռավար կամ համակցված/հեռավար մեթոդներով: • Դպրոցի գործունեությանը վերաբերող էլեկտրոնային փաստաթղթերի վարում • ՏՀՏ –ներով համալրված ինֆորմատիկայի կաբինետ ուսուցիչների և սովորողների ճիշտ ընկալման ինքնազարգացման համար:	էլեկտրոնային գրատախտակների և հաղորդակցական այլ տեխնոլոգիաների պակաս: • Տարեց ուսուցիչների շրջանում ՏՀՏ –ների, նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառության դժվարություններ և մոտիվացիայի պակաս:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Իրավիճակից ելնելով կարելի է փաստել, որ դպրոցն ունի ՏՀՏ – ների , ժամանակակից տեխնոլոգիաների և նորարարությունների պակաս: Մանկավարժների մեծ մասը լավ տիրապետում է դպրոցում առկա ՏՀՏ - ներին և տեխնոլոգիաներին: Կան տարեց ուսուցիչներ, ովքեր դժվարանում են դրանց ընդունման և ընկալման հարցում: Դպրոցի տնօրինությունը աշխատանքներ է տանում մանկավարժական համակազմը երիտասարդ կադրերով համալրելու համար:

ՏՀՏ – ները ուսումնական գործընթացում կիրառելու համար դասացուցակը կազմվում է այնպիսի ձևով, որը հնարավորություն է տալիս բոլոր առարկաների ուսուցիչներին անհրաժեշտության դեպքում իրենց դասերը կազմակերպել ինֆորմատիկայի կաբինետում:

Այս ուսումնական տարվանից դպրոցում ներդրվել է 2-րդ, 5-րդ, 7- րդ դասարաններում Հանրակրթական պետական չափորոշիչներ(ՀՊՉ), ինչպես նաև նախագծային և հետազոտական ուսուցման

մեթոդը: Դպրոցի համապատասխան ուսուցիչները ԿԶՆԱԿ –ի կողմից անցել են վերապատրաստումներ:

Նպատակ	• Լինգոֆոնիայի դասասենյակի ստեղծում • Ժամանակակից ՏՀՏ –ների, էլեկտրոնային գրատախտակի և այլ ժամանակակից տեխնոլոգիաների ձեռքբերում • Դպրոցի գործունեության համար փաստաթղթերի թվայնացում , արխիվացում: • Նորարարական ուսուցման մեթոդների կիրառում; • Մեդիագրագիտության ուսուցման շրջանակների լայնացում; • Ուսուցիչների կողմից ՏՀՏ – ների ճիշտ օգտագործում և լիարժեք կիրառում դասապրոցեսում: • Արտադասարանական խմբակներում ՏՀՏ – ների կիրառում:
Խնդիր	• ՏՀՏ – ների , նոր տեխնոլոգիաների ոչ բավարար քանակ: • Պետական բյուջեից ֆինանսական միջոցների պակաս: • Տարեց ուսուցիչների մոտ նոր մեթոդների և տեխնոլոգիաների դժվարընկալում և ՏՀՏ –ների կիրառության դժվարացում: • Ուսուցիչների շահագրգռվածության, մոտիվացիայի պակաս:
Իրականացվող գործողություն	• Ֆինանսական ներդրումների, բարեգործների շնորհիվ ձեռք բերել ժամանակակից ՏՀՏ- ներ, էլեկտրոնային գրատախտակ և այլ տեխնոլոգիաներ: • Դրամաշնորհների շնորհիվ ստեղծել լինգոֆոնիայի կաբինետ • Ապահովել ուսուցիչների մասնակցությունը ԿԶՆԱԿ – ի կողմից կազմակերպվող վերապատրաստումներին՝ նոր մեթոդների և տեխնոլոգիաների ներդրման կիրառման համար: • Համագործակցություն, փորձի փոխանակում մենթոր դպրոցների,

	վերապատրաստող կազմակերպությունների հետ, ինչի արդյունքում ապահովել ուսուցիչների կողմից նորարարությունների ճիշտ ընկալումը:
Պատասխանատուներ	• Տնօրեն • Համակարգող • Ուսումնական գծով տեղակալ • մ/մ նախագահներ • մանկավարժներ
Կատարման ժամկետներ	• ՏՀՏ – ների , էլեկտրոնային գրատախտակների և այլ ժամանակակից տեխնոլոգիաների ձեռք բերում 2023-2027թթ • ՏՀՏ – ների, նոր մեթոդների և տեխնոլոգիաների ներդրում և շարունակական կիրառություն ուսումնական ողջ տարիների ընթացքում: • Նախագծային և հետազոտական ուսումնական մեթոդի կիրառում 2023թ-ից և կունենա շարունակական բնույթ: • Մեդիագրագիտություն - կիրառվում է և կկիրառվի ողջ տարիների ընթացքում: • Մանկավարժական համակազմում երիտասարդ կադրերի ընդգրկում- 2023-2028թթ
Ռիսկեր	• ՏՀՏ – ների և նոր կիրառվող մեթոդների նկատմամբ ուսուցիչների մոտիվացիայի պակաս: • Ֆորսմաժորային իրավիճակ: • Ֆինանսների պակաս:
Ռիսկերը մեղմացնող գործողություն	• Աջակցել և խրախուսել ուսուցիչներին ՏՀՏ – ների, , նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման և ճիշտ ընկալման հարցում: • Ելնելով ստեղծված իրավիճակից՝ կազմակերպել համապատասխան գործողություններ: • Ապահովել ներդրումներ բարեգործների կողմից:

Ակնկալվող արդյունքներ	• Նորագույն տեխնոլոգիաների և նորարարությունների լիարժեք ապահովում; • Արհեստավարժ և մասնագիտական բարձր որակավորում ունեցող ստեղծագործ և նորարար ուսուցիչներ: • Ժամանակակից և մրցունակ դպրոց: • Սովորողների մասնագիտական ճիշտ կողմնորոշում և ընտրություն: • Զարգացած մեդիագրագիտություն; • Համագործակցային կապերի ստեղծում ՀՀ –ի լավագույն և հեղինակավոր դպրոցների հետ:
Գնահատման չափանիշ	• Դասերի ընթացքում չեն կիրառում ՏՀՏ – ներ, նոր տեխնոլոգիաներ-անբավարար • Ուսուցիչների կողմից կիրառվում են որոշակի ՏՀՏ –ներ և նոր տեխնոլոգիաներ- բավարար • Ուսուցիչների գերակշռող մասը կիրառում է ՏՀՏ –ներ , նոր մեթոդներ, տեխնոլոգիաներ, որոնց արդյունքը դրական է - լավ • Բոլոր ուսուցիչների կողմից ճիշտ կիրառվում են նոր ժամանակակից ՏՀՏ – ներ, ուսուցման նոր մեթոդներ, տեխնոլոգիաներ, արդյունքը դրական է, ինչպես նաև դ պրոցը պարբերաբար ձեռք է բերում ժամանակակից տեխնոլոգիաներ, ՏՀՏ –ներ, էլեկտրոնային այլ նորարարություններ - գերազանց:
վերահսկողություն	• Տնօրեն • ԿԽ

9.ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Կրթության բնագավառում կրթական իրագործումը հասկացվում է որպես ուսումնական գործընթացում սովորողի անձնական ներգրավվածության, նրա ինքնորոշման և ինքնակազմակերպման հետևանք: Այսինքն դպրոցում սովորողների ընդհանուր ուսուցումը, ուսուցման որակի բարձրացումը պետք է համապատասխանի համայնքի, հասարակության և միջազգային պահանջներին, քանի որ բոլոր համակարգերի թվայնացման, գլոբալացման գործընթացները հանգեցնում են մեկ սկզբունքի՝ բազմաբովանդակ կարողություններով ձևավորված շրջանավարտ:

Սկզբունքի իրականացման համար խիստ անհրաժեշտ են ուսուցման և դաստիարակության գործընթացում ներդնել և կիրառել նոր մեթոդներ, տեխնոլոգիաներ, ՏՀՏ-ներ:

Կրթության որակը՝ կրթության զարգացման հիմնական նպատակներից է: Կրթության ցանկացած բարեփոխում նպատակ ունի բարելավել կրթության որակը: Դա ժամանակակից մանկավարժության և ընդհանուր առմամբ հասարակության հիմնական խնդիրներից է: Կրթությունը պետք է հասկանալ որպես սովորողների գիտելիքների, գործնական հմտությունների տիրապետում, մտավոր, ճանաչողական և ստեղծագործական կարողությունների զարգացում: Ինչպես նաև աշխարհայացքի և բարոյական, գեղագիտական մշակույթի զարգացում, որոնցից նրանք ձեռք են բերում կարողություններ, դիրքորոշում, արժեհամակարգ:

Արդի ժամանակներում կրթության համար սահմանված են ուսուցման նոր չափորոշիչներ, մանկավարժների մասնագիտական զարգացման նոր չափանիշներ, որոնցով էլ մեր դպրոցը առաջնորդվում է:

Դպրոցում ճիշտ ուսուցման կազմակերպման և ուսման որակի բարձրացման կարևոր պայմաններից է ուսումնական միջավայրը: Այն ունի հստակ սկզբունք և կառուցվածք, որն իր մեջ ներառում է դպրոցի շենքային պայմանները, ենթակառուցվածքները,

նյութատեխնիկական բազան, համակարգված միջավայրերը, իրականացվող կրթական ծրագրերը, այդ թվում՝

- Առարկայական կաբինետներն ու լաբորատորիաները
- Ուսուցման նոր մեթոդները և տեխնոլոգիաները
- ՏՀՏ – ները և այլ հաղորդակցության տեխնիկաները
- Դասագրքերը, այժմ նաև էլեկտրոնային տարբերակով
- Նյութատեխնիկական , ուսումնամեթոդական սարքավորումները և դիդակտիկ նյութերը
- Լուսավոր և մեծ դասասենյակները
- Հանդիսությունների դահլիճը
- Սպորտդահլիճը
- Գրադարանը
- Ժողովրդավարության սկզբունքներով ձևավորված անվտանգ, առողջ միջավայրը
- Ուսուցման գործընթացին նպաստող համագործակցությունները
- Մասնագիտորեն զարգացած մանկավարժը

Սոցիալական փոփոխությունների հետ կապված շարունակաբար փոփոխվում են նաև կրթության որակները: Գիտելիքների, հմտությունների, կարողությունների, անհատական ցուցանիշների վերլուծությամբ կարելի է գնահատել կրթության որակը:

Ուսման որակի ապահովման ռազմավարության հիմքերն են՝

- ՀՊՉ–ի պահանջներին համապատասխան վերապատրաստում անցած ուսուցիչներ և այդ պահանջներին համապատասխան ուսուցման կազմակերպում;
- Սովորողների կարիքների ճիշտ գնահատում:
- Ուսուցման տարբեր մեթոդների և տեխնոլոգիաների ներդրում և կիրառում:
- Ուսուցման աշխատանքների կազմակերպում և դասաժամի կառավարում:
- Դասի օրվա պլանի կազմում՝ հարմարեցված սովորողների կարիքներին:
- Սովորողների համար սովորելու մոտիվացիա
- Դասի արդյունավետության բարձրացում, սովորողների ինտելեկտուալ կարողությունների զարգացում
- Համապատասխան դասերին ՏՀՏ –ների և լաբորատոր նյութերի կիրառում

- Ուսման բարձր որակի խթանում
- Սովորողների համար շերտավոր ուսուցման կիրառում
- Բոլոր սովորողների ուսումնառության մասնակցության ապահովում
- Անհատական մոտեցում յուրաքանչյուր սովորողի՝ կախված նրա կարողություններից, հոգեկան և ֆիզիկական առանձնահատկություններից:
- Դասի ընթացքում սովորողին խթանող աշխատանքների ներկայացում
- Ուսուցիչ- աշակերտ – ծնող փոխհարաբերությունների ամրապնդում:
- Ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համար երկարօրյա խմբերի ձևավորում և լրացուցիչ պարապմունքների կազմակերպում:
- Դասալսումների արդյունավետություն, դասի դիտարկում և քննարկում:
- Օլիմպիադաներին և մրցույթներին աշակերտների բավարար մասնակցություն:

Դպրոցում իրականացվում է ուսումնառության գնահատում՝ արձանագրելով դրանք էլեկտրոնային մատյանում, ընթացիկ և ամփոփիչ գնահատումներ, և հետադարձ կապ է տրամադրվում սովորողներին՝ հնարավորություն տալով նրանց վերահսկել իրենց առաջընթացն ու կատարել բարելավումներ: Սովորողների առաջադիմության ստուգման և կրթական կարիքների բավարարման նպատակով կիրառվում են հայտորոշիչ գործունեություն՝ տնօրինության կողմից գրավոր աշխատանքներ, ինտենսիվ դասալսումներ, առարկայական միամսյակներ և այլն:

Աշակերտների առաջադիմության մասին զեկուցվում է դասղեկների, մեթոդմիավորումների կողմից: Մանկավարժական խորհրդի նիստերում քննարկվում են առաջադիմության որակը բարձրացնելու գործողություններ:

Աշակերտների գնահատականները 2022-2023 ուստարում

դասարաններ	Գնահատված աշակերտների թիվը	Գերազանց	Լավ	Բավարար

2-րդ դասարան	7	2	4	1
3-րդ դասարան	7	3	2	2
4-րդ դասարան	11	1	2	8
5-րդ դասարան	12	2	4	6
6-րդ դասարան	7	2	3	2
7-րդ դասարան	11	2	4	5
8-րդ դասարան	16	2	2	12
9-րդ դասարան	14	-	8	6
10-րդ դասարան	13	6	1	6
11-րդ դասարան	13	-	1	12
12-րդ դասարան	10	-	5	5
	121 աշակերտ	20 աշակերտ	36 աշակերտ	65 աշակերտ



Գերազանց և լավ սովորողների թիվը տոկոսներով

Տարրական դ.- 56% , միջին դ.- 48% ,ավագ դ.- 36%, ընդհանուր- 46%

Աշակերտների ուսման առաջադիմությունը նշված ուստարիների կտրվածքով



Տարրական դ. -100%

Միջին դ.-100%

Ավագ դ. -100%

Ուսման որակը բարձրացնելու համար կարևոր նշանակություն ունեն նաև արտադասարանական խմբակները: Դպրոցում գործում են հետևյալ խմբակները՝

<<Մայրենի ընթերցանություն>>

<<Քայլ առ քայլ>>

<<Հմուտ ձեռքեր>>

Յուրաքանչյուր խմբակի ղեկավար կազմում է պարապմունքների ծրագիրը և ըստ դրա՝ իրականացնում է իր աշխատանքները: Խմբավարները ներկայացնում են հաշվետվություններ և կազմակերպում ըստ բովանդակության միջոցառումներ:

ՀՖՖ-Ն ՈՒԵՖԱ-ի և Դիսնեյլենդի հետ համատեղ իրականացնում են Playmakers (Փլեյմեքերներ) ծրագիրը: Վերջինիս ակտիվ մասնակցություն ունի նաև Կաքավաձորի Մ.Մխիթարյանի անվան միջնակարգ դպրոցը: Ծրագրին մասնակցում են 5-ից 8 տարեկան աղջիկները: Այն աղջիկների մոտ զարգացնում է մի շարք մարդկային արժեքներ՝ ընկերասիրություն, փոխօգնություն, հարգանք, վստահություն, հոգատարություն:

Կաքավաձորի Մ.Մխիթարյանի անվան դպրոցից մասնակցում են 20 աղջիկ: Ծրագիրն ունի տրամաբանական շարունակություն: Զարգացնելով աղջիկների մոտ նաև սեր դեպի գնդակը նպատակ ունի հավաքագրել տաղանդների , ովքեր կշարունակեն մարզումները աղջիկների մանկապատանեկան ֆուտբոլում:

2021 թվականից մինչև օրս Կաքավաձորի Մ. Մխիթարյանի անվան միջնակարգ դպրոցում գործում է <<Կաքավաձորի աղջիկներ>> ֆուտբոլային ակումբը, որը նաև մասն է կազմում <<Ախթամար>> աղջիկների ֆուտբոլի ակադեմիայի: Թիմն այս տարիների ընթացքում հանդես է եկել ԿՄ10, ԿՄ12, իսկ այս տարի հանդես կգա ԿՄ13 մանկապատանեկան առաջնությունում, որը կազմակերպում է ՀՖՖ-ն: Դպրոցում ունենք նաև ֆուտբոլիստուհիներ, ովքեր խաղում են ՀՖՖ ֆուտբոլի առաջնության առաջին խմբում: Աշակերտները նաև ակտիվ մասնակցում են սպորտլանդիաներին և սպարտակիադաներին լավագույնս ներկայացնելով դպրոցը: Ունեն մեդալներ, շնորհակալագրեր, պատվոգրեր և գավաթ:

Ուսման որակի բարձրացման գործում իր ազդեցությունն ունի սովորողների կողմից առարկայական օլիմպիադաների մասնակցությունը: Մեր դպրոցի աշակերտները միշտ ունեցել են իրենց ակտիվ մասնակցությունը համայնքային, մարզային, հանրապետական օլիմպիադաներին:

Ուսման որակի բարելավման պայմաններից է երկարօրյա խմբերի ձևավորումը և ուսուցման կազմակերպումը ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համար: Երկարօրյա խմբերը ձևավորվում են նոր կարգի համաձայն և ծնողների համաձայնությամբ:

Կրթության որակի կարևորագույն և առանցքային գործոններից է բարձրագույն կրթություն ունեցող համապատասխան որակավորմամբ, հմուտ և բանիմաց մանկավարժական համակազմը: Մեր դպրոցի բոլոր մանկավարժները անցել են համապատասխան վերապատրաստումներ, մեծ մասը կարողանում է տիրապետել նորագույն տեխնոլոգիաներին և ՏՀՏ – ներին: Սերտ և ամուր է աշակերտ- դպրոց – ուսուցիչ կապը, ինչը փաստում է , որ մեր սաները սիրում են դպրոցն ու կրթությունը:

Աշակերտական համակազմ

2023թ-ի սեպտեմբերի դրությամբ՝ դպրոցում սովորում է 137 աշակերտ, որից տարրական դասարաններում 39 աշակերտ, հիմնական՝ 58, միջնակարգ՝ 40 աշակերտ:

Դպրոցում ունենք վկայագրված ԿԱՊԿՈՒ 2 աշակերտ՝ միջին ծանրության:

Հանրակրթությունից դուրս մնացած և տնային ուսուցման ենթակա աշակերտ չկա:

Աշակերտների թվի փոփոխությունների դինամիկան ըստ նշված ուստարիների

Դասարանների թիվը	2020-2021 ուսումնական տարի	2021-2022 ուսումնական տարի	2022-2023 ուսումնական տարի	2023-2024 ուսումնական տարի	Փոփոխությունների դինամիկա
1-ին դասարան	8	8	12	11	Աճ
2-րդ դասարան	12	8	7	14	Աճ
3-րդ դասարան	12	11	7	7	Նվազում
4-րդ դասարան	7	11	11	7	Նվազում
5-րդ դասարան	13	7	12	12	Նվազում
6-րդ դասարան	17	13	6	12	Աճ
7-րդ դասարան	14	17	11	7	Նվազում
8-րդ դասարան	13	14	16	11	Նվազում
9-րդ դասարան	13	13	14	16	Աճ

10-րդ դասարան	10	13	13	14	Աճ
11-րդ դասարան	12	10	13	13	Աճ
12-րդ դասարան	10	11	10	13	Աճ
Ընդհանուր	141	136	132	137	Աճ

Դասարանների թվի դինամիկայի փոփոխությունն ընթացիկ և նախորդ երեք տարիների կտրվածքով

Դասարանների թիվը	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	Փոփոխությունների դինամիկան
1-ին դաս.	1	1	1	1	անփոփոխ
2-րդ դասարան	1	1	1	1	անփոփոխ
3-րդ դասարան	1	1	1	1	անփոփոխ
4-րդ դասարան	1	1	1	1	անփոփոխ
5-րդ դասարան	1	1	1	1	անփոփոխ
6-րդ դասարան	1	1	1	1	անփոփոխ
7-րդ դասարան	1	1	1	1	անփոփոխ
8-րդ դասարան	1	1	1	1	անփոփոխ
9-րդ դասարան	1	1	1	1	անփոփոխ
10-րդ դաս.	1	1	1	1	անփոփոխ
11-րդ դաս.	1	1	1	1	անփոփոխ
12-րդ դաս.	1	1	1	1	անփոփոխ
ընդամենը	12	12	12	12	անփոփոխ

Ընդհանուր առմամբ փոփոխություն տեղի չի ունեցել:

Տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ 2022-2023 ուսումնական տարում՝

Հիմնական առարկաներ	Սովորողների թիվը	Պետական պարտադիր առարկաներից տարեկան գնահատականների միջինը	4-րդ դաս. Գիտելիքների ստուգման, 9-րդ , 12-րդ դաս. Ավարտական ավարտական քննությունների միջինը

	4-րդ	9-րդ	12-րդ	4-րդ	9-րդ դաս.	12-րդ Դաս.	4-րդ դաս.	9-րդ դաս.	12-րդ Դաս.
Հայոց լեզու մայրենի	11	14	10	8	8	7	7%	12.9%	12.2%
Հ. գրականություն		14	10		8	7		16.7%.	
Մաթեմատիկա	11	14	10	7	8	8	8%	12.2%	12.7%
Բնագիտություն (ֆիզիկա, քիմիա, աշխարհագր. , կենսաբանություն)		14	10		8			14.4%	
Պատմություն		14	10		8	8		15%	
Օտար լեզու		14	10		7	7		14.35%	13.7%
ընդամենը	11	14	10						

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
• Բարձրագույն կրթություն ունեցող համապատասխան որակավորմամբ մանկավարժական համակազմ • ՀՊՉ –ին համապատասխան ուսուցման կազմակերպում, կրթության բարձր որակի խթանում • Նոր մեթոդներ կիրառող ուսուցիչներ-(45%) • Ինֆորմատիկայի կաբինետ, որտեղ անցկացվում են արդյունավետ դասեր • ՏՀՏ – ների և տեղեկատվական այլ տեխնոլոգիաներ կիրառող ուսուցիչներ -(75%) • Ուսման որակի բարելավման համար մշտադիտարկումներ, փոխադարձ դասալսումներ • Առողջ մթնոլորտ, սերտ փոխհարաբերություններ • Գրավիչ միջավայր • Լուսավոր մեծ	• Նախագծային աշխատանքներ իրականացնելու ոչ բավարար հմտություններ • Լաբորատորիաների համար ժամանակակից ՏՀՏ – ների, սարքավորումների, դիդակտիկ նյութերի պակաս • Բարձր դասարաններում հաճախումների և սովորելու մոտիվացիայի պակաս • Էլեկտրոնային գրատախտակի և լինգոֆոնիայի կաբինետի բացակայություն • Որակավորման տարակարգ և կամավոր ատեստավորման մասնակցության պասիվություն մանկավարժների կողմից • Երկարօրյա խմբերի բացակայություն

դասասենյակներ	

նպատակ	• Նոր չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի ապահովում • Ուսուցման տարբեր մեթոդների և տեխնոլոգիաների ներդնում և կիրառում • Նախագծային և հետազոտական ուսուցման կազմակերպում • Աշակերտակենտրոն ուսուցման կազմակերպում • Ժամանակակից մեթոդական գրականության ձեռք բերում • Արդյունավետ ռեսուրսների կիրառման միջոցով օժանդակել սովորողների ակտիվ մասնակցությունը դասապրոցեսում • Դասի արդյունավետության բարձրացում, սովորողների ինտելեկտուալ կարողությունների զարգացում, մոտիվացիա • Երկարօրյա խմբերի կազմակերպում • Նոր խմբակների ստեղծում
Խնդիր	• Դպրոցում ոչ բավարար ՏՀՏ – ներ և տեխնոլոգիաներ • ՀՊՉ-ի նոր պահանջների ոչ լիարժեք պատկերացում • Սովորողների գնահատման նոր ձևերի և տեսակների ոչ լիարժեք պատկերացում • Սովորողների և մանկավարժների նախագծային աշխատանքների կազմակերպման բարդություն • Արդի նյութատեխնիկական բազայի քիչ քանակություն
Իրականացվող գործողություն	• Կազմակերպել ուսուցիչների մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ունակությունների կատարելագործմանը նպաստող

	միջոցառումներ • Մանկավարժական առաջավոր փորձի յուրացման նպատակով իրականացնել համապատասխան աշխատանքներ • Ձեռնարկել միջոցներ ժամանակակից ՏՀՏ – ների և էլեկտրոնային գրատախտակների ձեռքբերման համար: • Դրամաշնորհների միջոցով ստեղծել լինգոֆոնիայի դասասենյակ: • Շարունակել ակտիվորեն համագործակցել գործընկերների հետ և ձեռք բերել նոր համագործակցություններ: • Դպրոց- ծնող համագործակցության արդյունքում ստեղծել երկարօրյա խմբեր:
Պատասխանատուներ	• Տնօրեն • Համակարգող • Ուսումնական գծով տեղակալ • մ/մ նախագահներ • մանկավարժներ, ԾԽ, ԱԽ,
Կատարման ժամկետներ	• նպատակները, խնդիրները, իրականացվող գործողությունները դպրոցում կազմակերպվում և իրականացվում են, կունենան շարունակական բնույթ • ՏՀՏ – ների և նոր տեխնոլոգիաների ձեռք բերում- 2023- 2025թթ
Ռիսկեր	• Ուսուցիչների և սովորողների մոտիվացիայի պակաս • Անհանդուրժողականության մթնոլորտի ձևավորում • ֆորսմաժորային իրավիճակ
Ռիսկերը մեղմացնող գործողություններ	• Կազմակերպել խթանիչ, խրախուսող միջոցառումներ, ուսուցիչների և սովորողների շահագրգռվածությունը բարձրացնելու համար: • Ապահովել վերահսկողություն դպրոցում և ձևավորել առողջ, հանդուրժող միջավայր; • Ելնելով իրավիճակից կազմակերպել համապատասխան գործողություններ

Ակնկալվող արդյունքներ	• Արհեստավարժ և բարձր մասնագիտական որակավորում ունեցող ստեղծարար և նորարար ուսուցիչներ • Առաջադեմ դպրոց • Ուսման բարձր որակի շարունակական պահպանում: • ՀՊՉ –ի պահանջներին համապատասխան դասերի անցկացում արհեստավարժ մանկավարժների կողմից; • ԲՈՒՀ –եր ընդունվողների բարձր ցուցանիշ: • Ժամանակակից ՏՀՏ – ներով և նոր տեխնոլոգիաներով հագեցած դպրոց • Ցածր առաջադիմություն ունեցող սովորողների ուսման բարելավում երկարօրյա խմբերի միջոցով: • Բարձր ցուցանիշներ առարկայական օլիմպիադաներում • Մասնագիտական ճիշտ կողմնորոշում և ընտրություն • Սոցիալ – մշակութային կենտրոն հանդիսացող դպրոց:
Գնահատման չափանիշ	• Արդյունավետ կրթական միջավայրի բացակայություն- **անբավարար** • Արդյունավետ կրթական միջավայրի որոշակի պահպանում**- բավարար** • Արդյունավետ կրթական միջավայրի պահպանելուն զուգահեռ, օգտագործվում են որոշակի նորարարություններ **– լավ** • Իրականացվել են բոլոր նպատակները, լուծվել են դրանցից բխող խնդիրները, մեղմացվել են ռիսկերը և գրանցվել է բարձր արդյունք- **գերազանց**
Վերահսկողություն	• ԿԽ • Տնօրեն

10.ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բազմակարծությունը ժամանակակից աշխարհի բոլոր ոլորտներում՝ (ընտանիք, դպրոց, համայնք, շրջապատ, ԲՈՒՀ և այլն), ամենակարևոր խնդիրներից է: Բազմակարծությունն իրենից ենթադրում է հենց բազմազանություն : Բազմազանության ընդունումը սկսվում էերկխոսությունից: Երկխոսության միջոցով կարելի է հասնել փոխըմբռնման և տարբեր բնույթի հարաբերությունների հաստատման:

Կրթական միջավայրում շատ կարևոր գործոն է բազմակարծության մոտեցման խրախուսումը և ներառական երկխոսության հմտությունների զարգացումը:

Բազմակարծությունը նպաստում է միմյանց համոզմունքների և կարծիքների նկատմամբ փոխըմբռնման և հարգանքի արդյունավետության բարձրացմանը:

Դպրոցում բազմակարծություն կիրառելու համար առաջին հերթին պետք է ձևավորել արժեքային համակարգ՝ ներգրավելով բոլորին այդ համակարգում:

Յուրաքանչյուրի մասնակցությունը դպրոցի գործունեության ոլորտներում բազմակարծության կարևորագույն նպատակներից է: Արժեհամակարգը պետք է նպաստի մասնակցային որոշումների ընդունմանը: Մասնակցային որոշումների կայացումը համագործակցային է, ուստի համապատասխան համակարգում յուրաքանչյուր ոք կարող է մասնակցել որոշմանը:

Բազմակարծության, բազմազանության ընդունումը, մասնակցային որոշումների կայացումը ապահովում է յուրաքանչյուրի ներառվածությունը, ներգրավվածությունը, որը իրենից ենթադրում է հնարավորություն դիրքորոշումներ ներկայացնելու և լսելու այլ դիրքորոշումներ: Ներառականության շնորհիվ է, որ դպրոցում ստեղծվում է հանդուրժող և բոլորի համար հավասար, իրավունքները պաշտպանված միջավայր:

Բազմակարծությունը, ներառականությունը և մասնակցային արժեքային միջավայրը ձևավորվում են ժողովրդավարական սկզբունքների կիրառմամբ:

Ներառական կրթության հիմքում մարդու՝ կրթությունից օգտվելու իրավունքն է: Կրթական համակարգը ներառական է, եթե ընդգրկում է բոլոր աշակերտներին՝ անկախ նրանց ֆիզիկական և հոգևոր առանձնահատկություններից:

Դպրոցում պետք է ստեղծվեն հավասար պայմաններ յուրաքանչյուր սովորողի դպրոց ընդունվելու և սովորելու համար՝ անկախ կարիքներից, կարողություններից և սոցիալական ապահովության աստիճանից:

Առողջ բարոյահոգեբանական միջավայր ստեղծելու համար , շատ կարևոր է բացառել հալածանքի, օտարման և բռնության դեպքերը դպրոցում, որը վերջին շրջանում կրում է բուլինգ անվանումը:

Բուլինգը անցանկալի, ագրեսիվ վարքագիծ է, որը դրսևորվում է հատկապես դպրոցական տարիքի երեխաների մոտ: Բուլինգի դրսևորումներից են սպառնալիքներ հնչեցնելը, լուրեր տարածելը, ինչ –որ մեկի վրա բանավոր կամ ֆիզիկական հարձակվելը, որևէ մեկին մեկուսացնել շրջապատից, ինչն էլ օտարման միտում է և կարող է հանգեցնել ծանր հետևանքների: Հիմնականում բուլինգի դեպքերը տեղի են ունենում դպրոցում և շրջակայքում, խաղահրապարակներում, սակայն բուլինգի ժամանակակից և ամենատարածված <<տիրույթը>> ինտերնետն է: Ուստի շատ կարևոր է դպրոցում պարբերաբար իրականացնել կանխարգելման միջոցառումներ սովորողների հետ հանդիպումների, զրույցների ձևով, օգտագործել դասղեկի ժամը, կազմակերպել թեմայի վերաբերյալ ֆիլմերի դիտում: Հանդիպումներ կազմակերպել ծնողների հետ, համապատասխան մարմինների հետ , ակտիվ համագործակցել նրանց հետ ՝ բուլինգի դրսևորումները հասցնելով նվազագույնի: Կարևոր կանխարգելման պայման են նաև ծնողների ուշադրությունը, վերահսկողությունը, համացանցից օգտվելու կուլտուրան, մեդիագրագիտությունը:

Բուլինգի ՝ մասնավորապես օտարման դրսևորումներ լինում են նաև ուսուցիչների կողմից: Երբեմն ուսուցիչները դասերի ընթացքում անտեսում են որոշ սովորողների, որը կարող է պայմանավորված լինել ինչպես վատ սովորելու, այնպես էլ դասարանում ընտրյալ սովորողներ ունենալու հանգամանքի հետ: Իհարկե, այս ամենն անթույլատրելի է և անհատական աշխատանքներ պետք է տարվեն տվյալ ուսուցչի հետ:

Դպրոցում պետք է բացառվի բուլինգի որևէ դրսևորում և՛ սովորողների, և՛ մանկավարժների շրջանում:

Մեր դպրոցում կազմակերպվում է համընդհանուր ներառական կրթություն, ապահովելով կրթության հավասար հասանելիություն, հարմարեցնելով ուսուցումը տարբեր կրթական կարիքներին համապատասխան՝ աջակցություն ցուցաբերելով ԿԱՊԿՈՒ սովորողներին:

Ներառական կրթությունը ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, իսկ դպրոցն ու հանրակրթական համակարգը պետք է հարմարեցնեն նրանց մտավոր, հոգեբանական և ֆիզիկական զարգացման կարիքները և անհատական պահանջները:

Մեր դպրոցում սովորում են վկայագրված ԿԱՊԿՈՒ 2 աշակերտ, ովքեր օգտվում են դպրոցի կողմից մատուցված հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից: ԿԱՊԿՈՒ երեխաների մուտքը հանրակրթական դպրոցներ դեռևս բավարար չէ կրթական համակարգը ներառված համարելու համար:

Կան մի շարք խնդիրներ և նպատակներ, որոնց լուծումն ու իրականացումը միայն կարող է ապահովել արդյունավետ ներառում: Այդ նպատակներն են՝

- Հավասար հնարավորությունների ստեղծում յուրաքանչյուր երեխայի համար:
- Նրանց զարգացման և իրացման պահանջներին համապատասխան ուսումնական, անհատական, տեխնիկական միջոցների և սարքավորումների ապահովում
- Մասնագիտական թիմի և նրանց գործառույթների հստակ ամրագրում, ուսուցիչների վերապատրաստման ապահովում:
- Կրթական ծրագրերի , ուսումնական նյութերի համապատասխանեցում, առարկայական դասասենյակների հարմարեցում նրանց պահանջներին:
- Սննդի, բժշկական սպասարկման և բուժիչ- կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:
- Հանդիպումների կազմակերպում ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների և ուսուցիչների համար, նրանց տեղեկատվական մակարդակը բարձրացնելու համար:

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
• Համագործակցության բարձր մակարդակ՝ հանդուրժողականության և ժողովրդավարության սկզբունքների հիման վրա: • Համընդհանուր ներառական կրթություն: • Հանդուրժողականության միջավայր • Կրթության հավասար պայմանների հասանելիության ապահովում: • ՏՄԱԿ -ի , ՀՄԿ- ի կողմից համապատասխան վերապատրաստում անցած մանկավարժներ: • Հոգեբանի առկայություն • Սոց մանկավարժի առկայություն • Աշխատակազմի հարաբերություններում համերաշխության, պատշաճ վարվելակերպի և վարքագծի կանոնների կիրառում • Բազմակարծության ընդունում • Խնդիրների քննարկում և մասնակցային որոշումների կայացում • Մարդը՝ որպես մեծագույն արժեք • Անվտանգ և ապահով ֆիզիկական միջավայր • Հալածանքի, օտարման և բռնության դեպքերի բացահայտման և կանխարգելմանն ուղղված աշխատանքների իրականացում: • Համայնքի բուժքրոջ հաճախակի այցելություն	• ԿԱՊԿՈԻ սովորողների համար խելամիտ հարմարեցումների, թեքահարթակների բացակայություն: • Դպրոցի ընդհանուր գործունեության որոշ մասնակիցների մոտ ժողովրդավարական գործիքների կիրառության ոչ ճիշտ պատկերացում: • Հենաշարժողական խնդիր ունեցող երեխա • Համայնքում , որոշ մասի մոտ, ձևավորված կարծրատիպեր: • Սովորողների կողմից իրենց իրավունքների և պարտականությունների իմացության ոչ բավարար մակարդակ: • Դասարաններում հեռախոսների հասանելիություն

• Ուսուցիչների և աշակերտների ջերմ և հոգատար վերաբերմունքի շնորհիվ ԿԱՊԿՈՒ երեխաների հարմարվողականությունը միջավայրին: • Մտավոր կարողությունների խնդիր ունեցող հաշմանդամ երեխայի բացակայություն: • Տարածքային մանկավարժական կենտրոնի կողմից մշտական այցեր, հանդիպումներ ԿԱՊԿՈՒ երեխաների և իրենց ծնողների հետ (ամեն շաբաթ)	

Նպատակ	• Սովորողների բազմակողմանի և ներդաշնակ զարգացման համար պայմանների ստեղծում • Ձևավորված բազմակարծության, ներառականության և մասնակցային արժեհամակարգերի պահպանում • Բուլինգի դեպքերի կանխարգելում
Խնդիր	• Դպրոցի ընդհանուր գործունեության որոշ մասնակիցների մոտ ժողովրդավարական գործիքների կիրառության ոչ ճիշտ պատկերացում • Համապատասխան պայմանների համար անհրաժեշտ նյութական ռեսուրսների պակաս: • Համայնքի որոշ մասի կարծրատիպերի ազդեցություն
Իրականացվող գործողություն	• Ստեղծել նպաստավոր

	պայմաններ ազատ ինքնաարտահայտվելու և ինքնաքննադատությունը ընկալելի դարձնելու համար: • Կիրառել դասավանդման ժամանակակից և նորարարական ինտերակտիվ մոտեցումներ: • Խթանել բոլոր խորհրդակցական մարմիններում բազմակարծությունը և մասնակցային որոշումների կայացումը: • Վարչական աշխատողներին և մանկավարժներին մասնակից դարձնել ներառական կրթության թեմաներով վերապատրաստումներին: • ԿԱՊԿՈՒ սովորողների համար ստեղծել համապատասխան պայմաններ և ընդգրկել երկարօրյա խմբերում: • Ուսումնադաստիարակչական գործընթացներում ապահովել սեռերի հավասարությունը , սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների , ազգային փոքրամասնությունների, ԿԱՊԿՈՒ սովորողների մասնակցությունը, բռնության, օտարման և հալածանքի դեպքերը բացառելու համար:
Պատասխանատուներ	• Տնօրեն • Ուսումնական գծով տեղակալ • Համակարգող • ՄԽ, ԾԽ, • Մանկավարժներ • Աշխատակիցներ
Կատարման ժամկետներ	• Ուսումնական տարիների ամբողջ ժամանակահատվածում
Ռիսկեր	• Անհատի ոչ ադեկվատ

	դրսևորում • Որոշ կարծրատիպեր • Համագործակցության շահագրգռվածության պակաս
Ռիսկերը մեղմացնող գործողություններ	• ՄԽ- ում, ԱԽ –ում պարբերաբար իրազեկել վարքականոնների և ներքին կարգապահական կանոնների մասին • Շփումների և ակտիվ ներգրավվածության խթանում • Յուրաքանչյուրի նկատմամբ անհատական վերաբերմունքի ապահովում
Ակնկալվող արդյունքներ	• Արժևորված մարդ՝ անհատ • Ներառական, անվտանգ և առողջ միջավայր • Ժողովրդավարական սկզբունքներով առաջնորդվող դպրոց • Սովորողը որպես վերլուծող և համամարդկային արժեքներ կրող քաղաքացի
Գնահատման չափանիշ	• Ժողովրդավարական սկզբունքների ոչ պատշաճ կիրառում – անբավարար • Ժողովրդավարական սկզբունքներով ձևավորված միջավայր- բավարար • Բոլոր ոլորտներում Ժողովրդավարական սկզբունքների պահպանում- լավ • Դպրոցն աշխատում է իր բնական հունով, չկան արհեստական խոչընդոտներ և իրավիճակներ - գերազանց
Վերահսկողություն	• ԿԽ • տնօրեն

11.ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Առաջադեմ դպրոցի հաջողության գրավականը կայանում է աշխատակազմի արժեքային համակարգի հմտությունների, կարողությունների, փորձառության, ջանքերի, ձեռքբերումների, ինքնազարգացման և ինքնաճանաչողական դրսևորումների ճիշտ ձևավորման արդյունքում:

Աշխատակազմի մասնագիտական կարողություններից, գիտելիքներից բացի կարևոր է նաև խնդրահարույց իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու, անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու հմտության դրսևորումը:

Աշխատակազմի արժեքային համակարգը և գիտելիքները բարելավելու և բարձր մակարդակի վրա պահելու համար կարևոր են արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների ապահովումը:

Աշխատակիցների արժևորումը արդյունավետ աշխատանքի հիմքն է: Արդյունավետ աշխատանքը դրսևորվում է աշխատակցի կատարողականի գնահատմամբ:Գնահատումը աշխատակցի աշխատանքի կատարողականն է, որի վերլուծության նպատակն է բացահայտել աշխատակցի ուժեղ և թույլ կողմերը, առաջարկել կառուցողական հետադարձ կապ հետագայում հմտությունների, կարողությունների զարգացման համար և աջակցել նպատակների սահմանմանը: Աշխատակազմի գնահատումը մարդկային ռեսուրսների արժեքի գնահատումն է: Գնահատված աշխատակիցներով էլ ձևավորվում է արժևորված աշխատակազմը: Աշխատակցի գնահատման և արժևորման մեթոդներից է խրախուսումը:

Խրախուսումը խթանում է աշխատողին և դրդում՝ էլ ավելի արդյունավետ աշխատելուն, նպաստում նրա մոտիվացիայի մեծացմանը:

Խրախուսումը կարող է լինել ոչ նյութական(շնորհակալություն հայտնել, գովասանքի խոսքեր հղել, աշխատակազմի ներկայությամբ գնահատել կատարած արդյունավետ աշխատանքը) , նյութական

(դրամական պարգևներ, շնորհակալագրեր, հուշանվերներ և այլն):

Մեր դպրոցում եղել են խրախուսումներ դրամական պարգևների ձևով (շնորհակալագրեր, պատվոգրեր)ինչպես նաև գովասանքի և շնորհակալության խոսքեր:

Ըստ գրանցված հաջողությունների պատվոգրերով են պարգևատրվել.

- ՀԵՊ առարկայի ուսուցչուհին՝ Աստվածաշնչյան գիտելիքների մրցույթին մասնակցելու և աշակերտների առաջին պատվավոր հորիզոնականը զբաղեցնելու համար:
- Ֆիզկուլտուրայի ուսուցչուհին աղջիկների ֆուտբոլի թիմի Սպորտլանդիայի գավաթի խաղարկությանը մրցանակային հորիզոնական զբաղեցնելու համար:
- Շնորհակալագրերով են պարգևատրվել ԻՄՓԱՔԹ ակումբի կազմակերպիչները և երեխաները՝ համայնքի և դպրոցի զարգացմանն ուղղված աշխատանքների համար:
- Երկու տարի անընդմեջ տարեվերջին դրամական պարգևներով պարգևատրվել են իրենց աշխատանքը բարեխղճորեն կատարած ուսուցիչները:

Աշխատակցի մասնագիտական զարգացման մեթոդներից է ինքնակրթությունը և ինքնազարգացումը; Խրախուսման և գնահատման արժանի են այն ուսուցիչները, ովքեր չեն բավարարվում համապատասխան մարմինների կողմից տրվող ուսումով և գիտելիքներով, այլ իրենց գործունեության ողջ ընթացքում շարունակաբար զբաղվում են ինքնակրթությամբ և ինքնազարգացմամբ: Այս դեպքում շահում է և ինքը՝ ուսուցիչը, իրեն փոխկապակցված նաև՝ սովորողը, հետևաբար՝ դպրոցը, համայնքը, պետությունը:

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
• Աշխատակիցների մոտ աշխատանքի նկատմամբ բավարարվածություն • Ղեկավարի և աշխատակիցների միջև արդյունավետ	• Դպրոցում ինքնազարգացման , ինքնակրթության անհրաժեշտ պայմանների բացակայություն

հաղորդակցություն • Դպրոցում աշխատակիցների արժևորման միջավայր • Խրախուսման տարբեր ձևերի կիրառում • Դպրոցում բարոյահոգեբանական առողջ միջավայր	• Խրախուսման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պակաս

Նպատակ	• Արժևորված աշխատակազմ • Որակական բարձր ցուցանիշներ ցույց տվող աշխատակազմ • Դպրոցում աշխատանքային համերաշխ միջավայր • Խրախուսման նոր համակարգի ներդրում • Դրամական խրախուսանքի համար միջոցների հայթայթում • Ինքնակրթության և ինքնազարգացման համար համապատասխան միջոցների ստեղծում:
խնդիր	• Կամավոր ատեստավորման և որակավորման տարրակարգի մասնակցության պասիվություն • Ֆինանսական սուղ միջոցներ • Դպրոցում ինքնակրթության, ինքնազարգացման անհրաժեշտ պայմանների բացակայություն
Իրականացվող գործողություն	• Խրախուսել և աջակցել ուսուցիչներին կամավոր ատեստավորմանը և որակավորման տարրակարգին մասնակցելու: • Ֆինանսական միջոցներ գտնելու համար տանել աշխատանքներ • Շարունակել պահպանել աշխատակազմի արժևորման համակարգը

	• Ձեռք բերել համապատասխան միջոցներ՝ (ժամանակակից ՏՀՏ –ներ, ուսումնամեթոդական նյութեր և այլն) ինքնակրթության և ինքնազարգացման համար
Կատարման ժամկետներ	• Աշխատողների արժևորումը և խրախուսումը պետք է իրականացնել ամբողջ ուսումնական տարիների ընթացքում; • Համապատասխան միջոցներ՝ 2023-2025թթ
Ռիսկեր	• Աշխատակիցների կողմից շահագրգռվածության մոտիվացիայի պակաս • Դպրոցի սահմանափակ ֆինանսական հնարավորություններ • Ֆորսմաժորային իրավիճակ
Ռիսկերը մեղմացնող գործողություններ	• Խթանել միջոցների կիրառում, մոտիվացնող միջոցառումներ • Ֆինանսական այլընտրանքային համակարգի մշակում • Ստեղծված ֆորսմաժորային իրավիճակից դուրս գալու համար կազմակերպել համապատասխան գործողություններ
Ակնկալվող արդյունքներ	• Առավել բարձր որակավորում ունեցող աշխատակիցներ • Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացում • Հաստատուն դրամական հոսքեր՝ դրամական պարգևատրման բյուջե կազմելու համար
Գնահատման չափանիշ	• Խրախուսման և գնահատման որևէ մեթոդ չի կիրառվել- **անբավարար** • Կիրառվել է միայն պատվոգրերի և շնորհակալագրերի խրախուսման ձևերը - **բավարար** • Կիրառվել է պատվոգրերի, շնորհակալագրերի և դրամական

	պարգևների խրախուսման ձևերը – **լավ** • Կիրառվել է պատվոգրերի , շնորհակալագրերի և դրամական պարգևների խրախուսման ձևերը, ձեռք է բերվել համապատասխան միջոցներ ինքնակրթության և ինքնազարգացման համար, աշխատակցի արժևորման մակարդակը բարձր ցուցանիշ ունի – **գերազանց**
վերահսկողություն	• Տնօրինություն • ԿԽ

12.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ, ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Դպրոցի հիմնական ֆինանսավորման աղբյուրը պետական բյուջեն է: Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը ֆինանսական միջոցները կառավարելու հիմնական գործիքներից մեկն է, որի համար հիմք կարող են հանդիսանալ պարբերաբար ներկայացված հաշվետվությունները:

Դպրոցի կառավարման հին կարգի համաձայն՝ դպրոցի ֆինանսական միջոցների վերաբերյալ բոլոր ուղղություններով համապատասխան փաստթղթերը նախ ներկայացվում էր դպրոցի կառավարման խորհրդի քննարկմանը և հավանությանը, որից հետո ներկայացվում լիազորված մարմնի հաստատմանը:

Դպրոցի կառավարման նոր կարգի համաձայն ֆինանսատնտեսական ամբողջ բաժնի գործողությունները պետք է կազմակերպվի, վերահսկվի և իրականացվի համակարգողի կողմից՝ լիազորված մարմնի վերահսկողությամբ: Այս դեպքում տնօրենը ներկայացնում է ուսումնական գործընթացների վերաբերյալ խիստ անհրաժեշտ կարիքները՝ համակարգողին, կատարվում են

քննարկումներ, վերջինս էլ՝ ներկայացնում է լիազորված մարմնի հաստատմանն ու որոշմանը:

Դպրոցի ֆինանսավորումը պետբյուջեից կատարվում է ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի՝ կախված սովորողների թվից, իսկ 2023 թ-ի սեպտեմբերից՝ դասարանների թվով: Իրատեսորեն գնահատելով դպրոցի հնարավորություններն ընթացիկ ծախսերը իրականացվելու են օրենսդրությամբ սահմանված կարգով, առաջնորդվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով:

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ և թափանցիկ է:

Պետբյուջեից հատկացվող ֆինանսավորումն ըստ տարիների

2019 թ -45372998 դրամ

2020թ. – 51696900 դրամ

2021թ – 50433500 դրամ

2022թ – 53770320 դրամ

2023 թ – 55458900 դրամ – 8 ամսվա համար

Դպրոցի բյուջեի ծախսերն ունեն հետևյալ հիմնական ուղղությունները՝

- Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ
- Կոմունալ վճարներ
- Գրասենյակային և տնտեսական ապրանքներ
- Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր
- Հատուկ նպատակային ծախսեր
- Տեղեկատվական ծառայություն
- Կենցաղային և հանրային սնունդ

Դպրոցի առկա և ձեռք բերված գույքը հաշվառված է, կատարված է գույքագրում, հիմնական միջոցների գնահատում: Հաստիքացուցակը, նախահաշիվն ու ֆինանսատնտեսական հաշվետվությունները տեղադրված են դպրոցի կայքում:

Ուսուցիչների դրույքաչափերը 2019 թ –ի սեպտեմբերի դրությամբ եղել է

0 -1 տարի – 114400 դրամ

1- 15 տարի – 116600դրամ
2- 15 տարի և ավելի- 118800 դրամ

2023թ-ի սեպտեմբերից դպրոցի մանկավարժական աշխատողների դրույքաչափի փոփոխություն է կատարվել՝

1 –ին տարրակարգ - 114 400 դրամի փոխարեն – 119 808 դրամ

2- րդ տարրակարգ - 116 600 դրամի փոխարեն - 120 000 դրամ

3- րդ տարրակարգ - 118 800 դրամի փոխարեն - 120 200 դրամ

2023 թ-ի հունվարից ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատավարձը դարձել է 95 625 դրամ:

2018 թ. ՄԱԿ- ի կողմից ճաշարանի շահագործման համար ծախսված գումարներից բացի նաև իր ներդրումն է ունեցել դպրոցը:

Բյուջեի խնայված միջոցների հաշվին ճաշարանի վերանորոգման համար ծախսվել է 125 000 դրամ:

Ճաշարանի համար ձեռք է բերվել համապատասխան գույք՝

- Սեղան – 4 հատ× 30 000դ = 120 000 դրամ
- Աթոռ - 20 հատ × 8000 դ = 160 000դրամ
- Պահարան 1 հատ× 45000 դ
  Ընդհանուր- 450 000 դրամ

- 2019 թ պատուհանների ապակիների (պակետ) վերանորոգում – 509865դրամ
- Որոշ դասասենյակների վերանորոգման համար հատկացվել է 414 135 դրամ: ընդհանուր՝ 924000դրամ

2020թ –ին կատարվել են հետևյալ աշխատանքները՝
- Կրակմարիչ- 6 հատ × 13000 դ = 78 000դրամ
- Եվրո դռներ – 5 հատ× 66150 դ = 330750դրամ
- Սանհանգույցի վերանորոգում, շինանյութերի ձեռք բերում- 960000 դրամ

- Գլխավոր մուտքի երկրորդ դուռը 1 հատ 268800դրամ(7,68 մ²×35000)
- Էլեկտրական ջեռուցիչներ – 5 հատ × 25000 դ = 125000դրամ

2021 թ-ին կատարվել են հետևյալ աշխատանքները

- Աշակերտական սեղան և աթոռներ- 450000 դրամ
- Գրատախտակներ – 5 հատ × 25000 դրամ-125000 դրամ
- Առաջին հարկի միջանցքի վերանորոգում – 992750 դրամ
- Առանձին հոսանքագծի անցկացում – բյուջեից 450000 դրամ, մնացածը տրամադրվել է մարզպետարանի կողմից

2022թ-ին կատարվել են հետևյալ աշխատանքները

- Գրատախտակներ - 6 հատ × 30000 դրամ- 180000 դրամ
- Համակարգիչ- 1 հատ, ամբողջ սարքավորումներով -245000 դրամ
- Ինֆորմատիկայի կաբինետի համար էլեկտրական լարեր, սարքավորումներ – 50000 դրամ
- Ձնարգելանքների տեղադրում շինանյութի և կատարված աշխատանքի համար – 960000 դրամ

2023 թ-ին կատարվել են հետևյալ աշխատանքները

- Աշակերտական սեղան, աթոռ -12 հատ × 37000 դրամ- 444000 դրամ
- Ուսուցչի սեղան- 1 հատ և փափուկ աթոռ – 1 հատ- 56000 դրամ

Դպրոցի բյուջեի խնայված միջոցների հաշվին նախորդ 5 տարիների ընթացքում վերանորոգումների և գույքի ձեռք բերման համար ծախսվել է ընդհանուր 7089300 դրամ:

Վերը նշված տարիների ընթացքում դպրոցում կատարվել են վերանորոգման , շինարարական, գույքի տրամադրման, ջրամատակարարման և այլ աշխատանքներ համայնքի բարերարների և ծնողների աջակցությամբ:

Ամբողջովին վերանորոգվել է 3 դասասենյակ- 52մ², ընդհանուր – 156 մ²:

Բակում տեղադրվել է հուշարձան, սալապատվել է դպրոցի բակը, կառուցվել է քարե ցանկապատ 100մ երկարությամբ;

Որոշակի գույք է տրամադրվել մասնավորապես սեղաններ, փափուկ աթոռներ, պահարան, գրատախտակ ԻՄՓԱՔԹ ակումբի համար:

Նոր ջրագծի անցկացում է կատարվել 120մ երկարությամբ:

Բարեգործական հիմունքներով 2019 թ- ին դպրոցի այգում կատարվել է ծառատունկ, տնկվել է մոտ 100 պտղատու ծառ:

Դասագրքերի զեղչերը համապատասխան ուստարիներում

	2019- 2020 ուստարի	2020- 2021 ուստարի	2021- 2022 ուստարի	2022- 2023 ուստարի	2023- 2024 ուստարի
Զեղչված գումարը	54000դրամ	65000դրամ	64200դրամ	63000դրամ	56200դրամ

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
• Պետական բյուջեից ստացվող ֆինանսական միջոցների կայուն և ժամանակին փոխանցումներ • Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում և օգտագործում • Աշխատավարձի և կոմունալ ծախսերի ժամանակին վճարում • Սոցիալապես անապահով համակարգում ընդգրկված ընտանիքի երեխաներին անվճար դասագրքերի վարձավճարների փոխհատուցում պետական բյուջեից • Արդյունավետ օգտագործման արդյունքում՝ բյուջեում մնացորդ	• Պետական բյուջեից դպրոցի զարգացմանն ուղղված ծրագրերի կազմման ֆինանսավորման անբավարար ծավալ

Նպատակ	• Կայուն բյուջե
Խնդիր	• Բյուջետային միջոցները օգտագործել արդյունավետ և նպատակային
Իրականացվող գործողություն	• Ուսումնասիրել ֆինանսների տնօրինման, գույքի և ծառայությունների ձեռք բերման գործունեությունը, վերանայել և կատարել շտկումներ
Կատարման ժամկետներ	• 2023- 2028թթ
Պատասխանատուներ	• Տնօրեն • Համակարգող
Ռիսկեր	• Աշակերտների նախատեսվածից քիչ թվաքանակ և ոչ բավարար տնտեսումներ
Ռիսկերը մեղմացնող գործողություններ	• Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում
Ակնկալվող արդյունք	• Դպրոցում նախատեսված ներդրումային գործողությունների իրականացում
Վերահսկողություն	• Լիազորված մարմին • ԿԽ

13. ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Մանկավարժական խորհուրդ

Մանկավարժական խորհուրդը ուսումնական գործընթացի կազմակերպման ամենակարևոր օղակն է: Այն համարվում է որպես ինքնակառավարվող մարմին: Մանկավարժական խորհրդի նպատակն է կայացնել այնպիսի որոշումներ, որը կնպաստի դպրոցում սովորողի կարիքներին համապատասխան, նրա ուսումնառության ապահովմանն և յուրաքանչյուր մանկավարժի մասնագիտական զարգացմանը;

Մանկավարժական խորհուրդը՝ դպրոցի կանոնադրության համաձայն , կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: ՄԽ –ն ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: ՄԽ- ն իր կազմի փակ քվեարկությամբ ընտրում է կառավարման խորհրդի երկու անդամ:

Դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները ՄԽ –ի անդամներ են: ՄԽ –ն ձևավորված է 28 անդամներից: Կանոնադրության համաձայն ՄԽ -ի նախագահը տնօրենն է:

ՄԽ – ի նիստերը գումարվում են առնվազն 2 ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում՝ հրավիրվում են նաև արտահերթ նիստեր:

Անհրաժեշտության դեպքում մանկավարժական խորհրդի նիստերին մասնակցելու համար, խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրվում են ծնողներ, աշակերտական խորհրդի ներկայացուցիչներ:

Մանկավարժական խորհրդի հրավիրված նիստերի ընթացքում քննարկվել են հետևյալ հարցերը՝

- Հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան՝ հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը՝ սովորողների հակումներին և ընդունակություններին, նրանց կյանքի և առողջության պահպանմանը համապատասխան:
- Տնօրենի կողմից կազմած դպրոցի ներքին կարգապահական կանոնները:
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոն դիմելու հարցը՝ ծնողի համաձայնության առկայության դեպքում:
- Հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, ինչպես նաև նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները և այլն:
- Տնօրենի, փոխտնօրենների, առարկայական մեթոդական միավորումների հախագահների ներկայացված հաշվետվությունները:
- Տնօրենի կողմից ներկայացված բյուջեի նախագծի քննարկումը
- Քննարկվել է ծնողական խորհրդի հետ համատեղ՝ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին անվճար հիմունքներով դասագրքերով ապահովելու ցուցակը:
- Առարկայական մեթոդական միավորումների կողմից իրականացվող գործունեությունը:
- Ուսումնադաստիարակչական գործընթացին վերաբերող այլ հարցեր:

Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունել՝

- Դպրոցի աշխատանքային ռեժիմը և աշխատանքային շաբաթվա տևողությունը սահմանելու
- Սովորողներին դասարանից դասարան փոխադրելու
- Սովորողներին գովասանագրերով պարգևատրելու
- 120- 200 ժամ բացակայություն ունեցող սովորողներին թույլատրել մասնակցելու լրացուցիչ քննություններին
- Դպրոցի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման, այն տնօրենի հաստատմանը ներկայացման
- Դպրոցական բաղադրիչի բաշխումը դասավանդվող առարկաներին
- Դպրոցի շրջանավարտներին պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու
- Դպրոցի ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցեր:

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ

Դպրոցում ուսումնական արդյունավետ գործունեություն կազմակերպելու և դասավանդող ուսուցիչներին մեթոդական օգնություն ցույց տալու համար ձևավորվում են առարկայական մեթոդական միավորումներ:

Դպրոցի կանոնադրության համաձայն՝ առարկայական մեթոդական միավորումները ստողծվում են նույն առարկայի կամ հարակից առարկաների 3 և ավելի ուսուցիչների առկայության դեպքում:

Դպրոցի բոլոր ուսուցիչների առարկայական մեթոդական միավորումներում ընդգրկվածությունը պարտադիր է: Կարող են նաև ձևավորվել տարբեր դպրոցների և ուսուցիչների նախաձեռնությամբ միջդպրոցական մեթոդական միավորումներ: Առարկայական մեթոդական միավորումների նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Նիստերը

արձանագրվում են արձանագրությունների մատյանում: Առարկայական մեթոդական միավորումն իր կազմից ընտրում է նախագահ: Առարկայական մեթոդական միավորումների գործունեության սկզբունքն ու նպատակն է խթանել ուսուցիչների ներուժի և նրանց ստեղծագործական ունակության զարգացմանը, ինչպես նաև առաջնորդել նրանց զարգացնելու ժամանակակից ՏՀՏ – ների և նոր մեթոդների, տեխնոլոգիաների կիրառման կարողությունները:

Առակայական մոթոդական միավորումների վրա դրված են՝ ժամանակին համարժեք պահանջներ, կարևոր է նրանց կողմից մանկավարժներին ներկայացվեն արդյունավետ փորձը, նոր տեխնոլոգիաների կիրառության հմտությունները, ընտրվեն համագործակցային արդյունավետ ուղիներ, որոնց հիմքով կձևավորվի վարքագիծ՝ արդյունավետ ուսուցման կազմակերպման համար:

Դպրոցում գործում է առարկայական երեք մեթոդական միավոր՝

1. Տարրական
2. Լեզուներ
3. Բնագիտական

Նիստերի ընթացքում մեթոդական միավորումները քննարկում են հետևյալ ընդհանուր հարցերը՝

- Առարկայական թեմատիկ պլանների և օրվա դասի պլանի կազմում
- Ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում՝ տնօրենին առաջարկության ներկայացման համար
- Դպրոցի բաղադրիչ ժամերի տնօրինման առաջարկությունների քննարկում և ներկայացում մանկավարժական խորհրդին
- Ներդպրոցական առարկայական մրցույթների և միջոցառումների կազմակերպում
- Դասալսումների իրականացում և բաց դասերի կազմակերպում
- Կամավոր ատեստավորման , որակավորման տարակարգի՝ ուսուցիչների ակտիվ մասնակցություն:

Առարկայական մոթոդական միավորումների նախագահները այս տարի <<Ձևափոխվող կրթություն >> կրթական հիմնադրամի կողմից անցել են համապատասխան վերապատրաստումներ:

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնակից է նաև դպրոցի ծնողական խորհուրդը, որը համարվում է որպես ինքնակառավարվող մարմին: Դպրոցի կանոնադրության համաձայն ՝ դասարանների ծնողական խորհուրդները (կազմված նախագահից և 2 – 4 անդամներից) ընտրվում են դասարանի ծնողների ընդհանուր ժողովի կողմից՝ մեկ ուսումնական տարվա համար:

Դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: Ծնողական խորհրդի նախագահը մանկավարժական խորհրդի անդամ է: Դպրոցի ծնողական խորհուրդը իր կազմից ընտրել է դպրոցի կառավարման խորհրդի երկու անդամ:

Դպրոցի ծնողական խորհրդի նպատակն է համախմբել ծնողներին և մասնակիցը դարձնել դպրոցում իրականացվող ուսումնական գործընթացի բարելավմանը, ծնողական համայնքի և դպրոցի համագործակցության ամրապնդմանը:

Ծնողական խորհրդի նիստերում քննարկվում են հետևյալ հիմնական հարցերը՝

- Ծնողների անմիջական մասնակցությունը ուսումնադաստիարակչական գործընթացներին
- Սովորողների անվտանգության և իրավունքների պաշտպանության հարցը
- ԿԱՊԿՈՒ սովորողների դպրոցական միջավայր՝ ճիշտ ինտեգրվելու հարցը
- Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին օգնության վերաբերյալ
- Ուսուցիչ- դպրոց – ծնող ճիշտ համագործակցություն սովորողների հետ կանխարգելու բռնության, հալածանքի և օտարման դեպքերը

- Դպրոցում սովորողների համար առավել հարմարավետ պայմանների ստեղծման հարցը (օրինակ՝ լոկալ ջեռուցում):
- Ծնողների ակտիվ ներգրավվածությունը արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներին
- Ծնողական համայնքի հնարավորության սահմաններում ֆինանսական միջոցների ներդրման հարցը:

Ծնողական խորհուրդը բաղկացած է 12 անդամներից:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշակերտական խորհուրդը դպրոցի սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմին է, որը ստեղծվում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան:

Ուսումնական տարվա առաջին աշակերտական ժողովը նախագահում է դպրոցի տնօրենը, որի ընթացքում էլ սահմանվում է աշակերտական խորհրդի աշխատակարգը: Աշակերտական խորհրդի նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել դասղեկները: Աշակերտական խորհուրդն իր կազմից փակ քվեարկությամբ ընտրում է խորհրդի նախագահ:

Աշակերտական խորհուրդը համագործակցում է տնօրինության, ծնողական խորհրդի և ուսուցիչների հետ:

Աշակերտական խորհրդի գործունության հիմնական սկզբունքը սովորողների իրավահավասարությունն է, նրանց ներգրավումը դպրոցի կրթական, դաստիարակչական գործընթացների կազմակերպման հարցերում: Աշակերտական խորհուրդը կազմում է ուսումնական տարվա համար աշխատանքային պլան և ըստ իր պլանի՝ իրականացնում տարաբնույթ միջոցառումներ, մասնակցում համայնքի կողմից նախաձեռնած շաբաթօրյակներին, նախագծերին, միջոցառումներին:

Աշակերտական խորհրդի գործունեության բովանդակությունը հնարավորություն է տալիս սովորողներին համախմբվելու, ինչպես նաև ձևավորում է կարողունակություն՝ ընտրելու, ընտրվելու և

կառավարելու: Աշակերտական խորհուրդը ձևավորվում է 7- 12 –րդ դասարանների աշակերտներից, յուրաքնչյուր դասարանից 2 աշակերտ՝ ընդհանուր 12 աշակերտ:

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
• Կանոնադրության դրույթներով ձևավորված Մ/Մ, ՄԽ, և ԱԽ • Խորհուրդների արձանագրություններ • Մ/Մ որոշումներ և արձանագրություններ • սահմանված ժամկետներում նիստերի հրավիրում • ՄԽ –ի կողմից հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերի, ինչպես նաև նոր փորձարկվող դասագրքերի, ձեռնարկների քննարկում: • ՄԽ –ի կողմից կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անհատական պլանի քննարկում:	• Խորհրդակցական մարմինների կողմից իրենց գործառույթների հստակ իրականացման, կանոնակարգման, միմյանց միջև արդյունավետ համագործակցության պակաս: • Համադպրոցական էքսկուրսիաների կազմակերպում • Հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդներ • Խորհրդակցական մարմինների անդամների ինքնազարգացման և ինքնակրթության մոտիվացիայի և անհրաժեշտ պայմանների պակաս:

• Մ/Մ նախագահների համապատասխան վերապատրաստում մանկավարժական խորդհրդի նիստերում մասնակցային որոշումների կայացում • Ձևավորված մեթոդական միավորումներ և համակարգված աշխատանք • Ծնողական խորհուրդը ծնողներին ներգրավում է սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում • Աշակերտական խորհրդի կողմից կազմակերպված տարաբնույթ միջոցառումների, մրցույթների միջոցով սովորողների կարողունակությունների ձևավորում: • Ծնողները կազմակերպում են ուսումնական և ճանաչողական էքսկուրսիաներ • Աշակերտական խորհուրդը մասնակցում է դպրոցի կյանքին, հասարակական և կամավորական աշխատանքներին • Ծնողական համայնքի հնարավորությունների սահմաններում ֆինանսական միջոցների նպատակային ներդրում:	• Մանկավարժների կողմից կամավոր ատեստավորման և որակավորման տարրակարգի մասնակցության հանդեպ պասիվություն • Աշակերտական խորհրդի իրազեկվածության և նախաձեռնությունների պակաս • Ծնողական խորհրդի կողմից նախաձեռնությունների պակաս • Միջդպրոցական մեթոդմիավորումների համագործակցության պակաս • Երկարօրյա ուսուցման կազմակերպման նախաձեռնությունների պակաս ծնողների կողմից:

նպատակ	• Ուսումնադաստիարակչական գործընթացի իրականացման համար բոլոր խորհուրդների ինքնուրույն նախաձեռնությունների և առաջադրանքների հստակ ներկայացում: • Դպրոցում վերապատրաստումների և դասընթացների կազմակերպում, պարբերաբար ներդպրոցական առարկայական մրցույթների կազմակերպում • Ժողովրդավարական սկզբունքների և հանդուրժողականության ներդրում՝ բոլոր գումարված նիստերի ժամանակ • Խորհրդակցական մարմինների միջև արդյունավետ համագործակցության ամրապնդում: • Համայնք- դպրոց - համագործակցության ապահովում • Սովորողի ներուժի բացահայտում, զարգացում • Մ/Մ և ՄԽ –ի անդամների հաճախակի համապատասխան վերապատրաստումներ • սովորողների ինքնազարգացման և ինքնակրթության աջակցում, մասնագիտական կողմնորոշում • ծնողների և դպրոցի ջանքերի շնորհիվ երկարօրյա խմբերի և արտադասարանական խմբակների ստեղծում
Խնդիր	• խորհրդակցական մարմինների ոչ բոլոր անդամների ինքնուրույն նախաձեռնությունների պակաս • նիստերի ընթացքում քննարկումների մասնակցության պասիվություն • առաջավոր փորձի, նոր մեթոդների, տեխնոլոգիաների փոխանակման և ընկալման հարցում դժվարություններ • ծնողների կողմից ԱԽ –ի գործունեության գործառույթների իրազեկման պակաս

Իրականացվող գործողություն	• ստեղծել միջավայր՝ ժողովրդավարական գործիքների արդյունավետ կատարման համար • կազմակերպել համապատասխան վերապատրաստումներ, դասընթացներ՝ ըստ անհրաժեշտության • հետևել խորհրդակցական մարմինների գործառույթների պատշաճ կատարմանը • ապահովել խորհրդի անդամների մասնակցությունը դպրոցի կրթական ծրագրերին, միջոցառումներին, մրցույթներին: • շարունակել սերտ համագործակցությունը խորհրդակցական մարմինների հետ, ապահովել նաև այդ մարմինների փոխհամագործակցությունը • ծնողներին մասնակից դարձնել սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացին(երկարօրյա խմբերի ձևավորում):
պատասխանատուներ	• տնօրեն • ուսումնական գծով տեղակալ • ԴԱԿ • Խորհրդակցական մարմինների նախագահներ
Կատարման ժամկետներ	• Նշված նպատակների և դրանց իրականացման գործողությունների մեծ մասը չեն կարող ունենալ կոնկրետ կատարման ժամկետներ, քանի որ կրթությունը զարգացվող է, այն մշտական է, իրավական նորմերը անընդհատ փոփոխվող, ուստի այդ ամենը կլինի որպես ուղեցույց և կիրականացվեն գործունեության ողջ տարիների ընթացքում • Երկարօրյա խմբերի ստեղծում (

	կախված սովորողների առաջադիմությունից):
Ռիսկեր	• Խորհրդակցական մարմինների անտարբերություն, համագործակցելու շահագրգռվածության պակաս • Նորարարությունների դժվար ընկալում • Ֆորսմաժորային իրավիճակ
Ռիսկերը մեղմացնող գործողություններ	• Խթանման միջոցների կիրառում, խորհրդակցական մարմինների դերի արժևորումը դպրոցում: • Նոր մեթոդների , տեխնոլոգիաների ընկալման և կիրառման համար կազմակերպել խորհրդատվություններ, սեմինարներ , փորձի փոխանակում • Իրավիճակից ելնելով կազմակերպել համապատասխան գործողություններ
Ակնկալվող արդյունքներ	• Ժողովրդավարական սկզբունքներով առաջնորդվող դպրոց • Խորհրդակցական մարմինների գործունեության արդյունավետության բարձրացում • ԾԽ –ի և ԱԽ -ի դերի և ընդգրկվածության ընդլայնում դպրոցի ներքին կյանքում • Աշակերտ- ծնող , աշակերտ- համայնք- դպրոց, աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերությունների ամրապնդում • ԾԽ –ի կողմից ակտիվ մասնակցություն դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացներին
Գնահատման չափանիշներ	• Խորհուրդները ձևավորված են, բայց ոչ մի աշխատանք կատարված չէ – **անբավարար** • Խորհուրդները ձևավորված են, իսկ աշխատանքները՝ թերի – **բավարար** • Խորհուրդները ձևավորված են, կա ակտիվ համագործակցություն միմյանց միջև - **լավ** • Խորհուրդները ձևավորված են, ակտիվ համագործակցում են միմյանց հետ,

	լիարժեք կատարված են իրենց առջև դրված պարտականությունները - **գերազանց**
վերահսկողություն	• Տնօրեն • ԿԽ

14.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրում մարդկային, բյուջետային և տեխնոլոգիական ռեսուրսների հավասարաչափ ու արդյունավետ օգտագործումը:

Յուրաքանչյուր գործողության իրականացման ակնկալվող արդյունքների լիարժեք ապահովման համար պահանջվող անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները բավարար են և նպատակային;

Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման հիմքում կարևոր է ունենալ զարգացման ծրագրում ներառված բոլոր ոլորտների համապարփակ վերլուծությունները, որոնց արդյունքում դուրս բերված անհրաժեշտ բաղադրիչների, ռեսուրսների, եթե առկա է խնդիր, ապա դրանց արդյունավետ լուծումների շնորհիվ էլ հնարավոր կլինի իրականացնել զարգացման ծրագրում ամրագրված յուրաքանչյուր ոլորտի զարգացման նպատակները, սովորողների կրթական կարիքներին համապատասխան, հետևաբար և իրականացնել զարգացման ծրագիրը: Զարգացման ծրագրի մշակման այս բաժնի պահանջի մեկնաբանությունները ներկայացվում են նախորդ բաժիններում կատարված վերլուծությունների միջոցով:

ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Դպրոցի շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության նորմատիվներին: Շենքը մասամբ վերանորոգված է, տանիքը՝ հիմնանորոգված, տեղադրված են ձնարգելանքներ, բոլոր դռներն ու պատուհանները փոխված են, ունի պահուստային ելքեր: Դպրոցի բակը ցանկապատված է և անվտանգ սովորողների տեղաշարժի համար: Դպրոցը չունի ապաստարան, չունի լոկալ ջեռուցում:

Շենքն իր նախատեսված հզորությամբ և ներկայիս վիճակով համապատասխանում է սովորողների թվին և նրանց համար իրականացվող կրթական ծրագրերին, չնայած կան որոշակի շեղումներ, մասնավորապես՝ լաբորատորիաների, լրացուցիչ դասասենյակների պակաս: Մասնակի վերանորոգման կարիք ունեն որոշ ենթակառուցվածքներ, սանհանգույցներ:

ԿԱՊԿՈՒ սովորողների համար չկան թեքահարթակներ և հարմարեցումներ:

Դպրոցում կրթական կարիքները և սովորողների անվտանգությունը ապահովող շենքային բավարար պայմանների ստեղծման համար պահանջվում են հետևյալ միջոցները՝

Պետական բյուջեի, օրենքով չարգելված ֆինանսավորման և այլ աղբյուրների, դպրոցի սեփական միջոցների շնորհիվ ձեռք բերել անհրաժեշտ շինանյութ, անհրաժեշտ պարագաներ և կատարել համապատասխան շինարարական աշխատանքներ:

ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ

Դպրոցի դասասենյակներում, կաբինետներում, լաբորատորիաներում, գրադարանում, սպորտդահլիճում, հանդիսությունների դահլիճում, ճաշարանում, նախակրթարանում առկա է որոշակի գույք և նյութատեխնիկական բազա;

Դպրոցի ուսուցիչների և սովորողների կողմից կրթական ծրագրերի իրականացման համար կիրառվում է առկա նյութատեխնիկական բազան, ինչը ունի որոշակի անբավարարություն, մասնավորապես համալրման, թարմացման, վերանորոգման տեսքով:

Դպրոցում համապատասխան կրթական ծրագրերի իրականացման համար պահանջվում են հետևյալ միջոցները՝

Պետական բյուջեի, օրենքով չարգելված ֆինանսավորման և այլ աղբյուրների, դպրոցի սեփական միջոցների միջոցով ձեռք բերել անհրաժեշտ համապատասխան գույք, ժամանակակից ՏՀՏ – ներ, նոր տեխնոլոգիաներ և այլ անհրաժեշտ պարագաներ:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Դպրոցում առկա ենթակառուցվածքների, /այդ թվում՝ դասասենյակներ, կաբինետներ, լաբորատորիա, գրադարան, սպորտդահլիճ, հանդիսությունների դահլիճ/ և մարդկային ռեսուրսների, /այդ թվում՝ առարկաներ դասավանդող ուսուցիչներ, լաբորանտ, հոգեբան, սոցմանկավարժ, գրադարանավար, ԴԱԿ, մաքրուհիներ, պահակներ, խոհարար/ միջև կա համապատասխանություն՝ չնայած որոշակի շեղումների /մասնավորապես չկան լրացուցիչ դասասենյակներ, լինգոֆոնիայի կաբինետ, արհեստանոցներ, բուֆետ, բուժկետ: Կա լաբորատորիաների և սանհանգույցի պակաս/:

Մարդկային ռեսուրսների մասով նույնպես անբավարարություն կա, կարիք կա բուժքրոջ, այգեպանի, մանկավարժական կազմում՝ երիտասարդ կադրերի ընդգրկման:

Առկա մարդկային ռեսուրսը բավարարում է ոլորտի գործառույթները իրականացնելու համար, նրանց համապատասխան բավարարում են ֆինանսական միջոցները՝ աշխատավարձի տեսքով:

15.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորված արդյունքների համեմատական գործընթաց է: Ծրագրի իրատեսությունը և նրա արդյունավետության վերաբերյալ վերլուծությունները դրվում են խորհրդակցական մարմինների քննարկմանը:

Դպրոցի կանոնադրության համաձայն՝ դպրոցի կառավարման խորհուրդը վերահսկում է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը, լսում է զարգացման ծրագրի կատարման հաշվետվությունը և տալիս եզրակացություն:

Զարգացման ծրագրի իրականացման մասով, որպեսզի կառավարման խորհուրդը տա եզրակացություն, տնօրենը պետք է ներկայացնի հաշվետվություններ, իսկ այդ հաշվետվությունների համար հիմք պետք է հանդիսանա ոլորտներում իրականացվող գործողությունների վերլուծությունները, դրանց հիմքով՝ վերահսկողության մեխանիզմները և այդ գործողությունների համար նախատեսված հաշվետվությունների ձևերն ու ժամանակացույցերը:

Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները

Միջոցառում/գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում միջոցառման/գործողությանչկատարման կամ մասնակի կատարման առկայության դեպքում/պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ	նշումներ

Համապատասխան ոլորտներում ամբողջական վերլուծությունները և ժամանակացույցներն արված են նախորդ բաժիններում:

Ըստ այդ վերլուծությունների՝ Շենքային պայմաններ, Ենթակառուցվածքներ, Նյութատեխնիկական բազա, Ֆինանսական միջոցներ, Մարդկային ռեսուրսներ, ոլորտներում հնարավոր գործողությունները, այդ թվում վերանորոգման աշխատանքները, նոր ենթակառուցվածքների տեղակայումը, նյութատեխնիկական բազայի համալրումը, ձեռքբերումը, գույքի ձեռքբերումը և օտարումը, ջեռուցման համակարգի տեղադրումը, աշխատավարձի վճարումը նոր կարգի համաձայն՝ տեղի է ունենում համակարգողի վերահսկողության ներքո: Այս ոլորտում դպրոցի տնօրենը կրթական ծրագրերի իրականացման համար ներկայացնում է անհրաժեշտ կարիքները , քննարկում համակարգողի հետ, վերջինս էլ ներկայացնում լիազորված մարմնի քննարկման և որոշման կայացմանը:

Այս ինքնկառավարման խորհրդին տնօրենի կողմից ներկայացված հաշվետվության մեջ մաս պետք է կազմի համակարգողի կողմից իրականացված գործողությունները փաստող տվյալները:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Ուսումնական ոլորտում նախատեսվող գործողությունները կրթական ծրագրերի իրականացումներն են, որոնք կատարում են ուսուցիչները, ովքեր պարբերաբար երկայացնում են կատարողականի հաշվետվություններ: Ուսուցիչների կատարողականը անմիջապես վերահսկվում է առարկայական մեթոդական միավորումների նախագահների կողմից, որի հիմքով էլ նրանք են ներկայացնում հաշվետվություններ և այս բոլորի հիմքով էլ հաշվետվություն է պատրաստում տնօրենի ուս. գծով տեղակալը:

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Այս ոլորտում երկարօրյա խմբերի ուսուցման, արտադասարանական խմբակների, արտադասարանական և արտադպրոցական միջոցառումների մասով կազմակերպվող աշխատանքները իրականացվում են ուսուցիչների, դասղեկների, արտադասարանական խմբակների խմբավարների, երկարօրյա խմբերի ուսուցումը կազմակերպող մանկավարժների միջոցով, ովքեր նոր կարգի համաձայն պարբերաբար ներկայացնում են հաշվետվություններ կրթական աջակցություններ դաստիարակչական աշխատանքների համակարգողին: Վերջինս էլ այս ամենի հիմքով ներկայացնում է հաշվետվություններ տնօրենին:

Տնօրենն այս ամենի հիմքով էլ կազմում է ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարման մասով հաշվետվություններ և ներկայացնում կառավարման խորհրդին՝ ըստ վերջինիս և տնօրենի միջև հաստատված ժամանակացույցի:

Վերահսկողությունն իրականացվում է մշտադիտարկման միջոցով, որը բաժանվում է մի քանի փուլերի: Մշտադիտարկում կիրականացվի՝ հիմք ընդունելով դպրոցի ներքին վերահսկողության արդյունքները, ինչպես նաև հիմք կարող է հանդիսանալ ներքին գնահատումը:

Սկզբնական փուլ- մինչև ուսումնական պարապմունքների սկսվելը- մինչև օգոստոսի 31- ը:

Ընթացիկ փուլ- առաջին և երկրորդ կիսամյակների ավարտը- մինչև հունվարի 10-ը և հունիսի 10-ը:

Ամփոփման փուլ – ուսումնական պարապմունքների ավարտ- մինչև հուլիսի 8- ը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Համագործակցության ոլորտում իրականացվող գործողությունները վերահսկվում են համագործակցող երկու կողմերի կողմից: Դպրոցի կողմից վերահսկողությունը իրականացվում է տնօրենի և համակարգողի միջոցով: Այս համատեքստում ֆինանսական միջոցների առկայության դեպքում համակարգողը (համակարգողի և տնօրենի համագործակցության արդյունքում) պետք է ներկայացնի

տվյալներ, իսկ ուսումնադաստիարակչական մասով էլ տնօրենն է կազմում հաշվետվություն:

Նշված հաշվետվություններն են կազմում այս ոլորտի՝ կառավարման խորհրդին ներկայացվելիք հաշվետվությունների հիմքը: Համագործակցության արդյունքում կատարվող գործողությունների ժամանակացույցը կազմվում է երկու կողմերի միջև համաձայնության արդյունքում՝ ելնելով այդ ընթացքից:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Դպրոցի ամենամյա աշխատանքային պլանը կազմվում է ըստ հնգամյա զարգացման ծրագրի: Տարեկան աշխատանքային պլանով նախատեսված նպատակներն ու խնդիրներն սահմանվում են ըստ անելիքների առաջնահերթության: Զարգացման ծրագիրը կազմված է նոր կրթական քաղաքականության փոփոխություններին համապատասխան՝ նպատակները ժամանակային առումով որոշակի են, իրատեսական և հասանելի: Այս զարգացումները լինելու են 2018 – 2023թթ կատարած մեր աշխատանքների շարունակությունը :

Ծրագրում կատարված փոփոխությունները ներկայացվում են դպրոցի կառավարման խորհրդի հավանությանը:

Զարգացման ծրագրի բոլոր դրույթներն ուղղված են կրթության որակի բարելավմանը; Զարգացման ծրագրի հաջող իրականացման դեպքում կունենանք մրցունակ դպրոց, ժամանակակից որակին համապատասխան կրթության ապահովում:

Զարգացման ծրագիրը ենթակա է փոփոխությունների ժամանակակից կրթական պահանջների, դինամիկ փոփոխություններին համահունչ ներքին կամ արտաքին գործոնների ազդեցությունների դեպքում, ինչպես նաև ժամկետից շուտ առանձին գործառույթներ իրականացնելուց հետո:

Հարգանքներով՝ Էմին Մինասյան